Ազգ
Azg
22 ՅՈՒՆԻՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 114(4733)
ISSN: 1829-1651

# Լորդերի պալատում Հայոց ցեղասպանության վերաբերյալ լսումներ են տեղի ունեցել

Ըստ «Nouvelles d`Arménie»-ի` Միացյալ Թագավորության Լորդերի պալատում հունիսի 16-ին տեղի են ունեցել Հայոց ցեղասպանության վերաբերյալ լսումներ: News.am -ը փոխանցում է. «Ոչ մի կասկած չկա, որ հայերի նկատմամբ վերաբերմունքը սարսափելի էր եւ դարձավ հարյուրհազարավոր մարդկանց մահվան պատճառ` զենքի, սովահարության, հիվանդությունների միջոցով: Նրանք չպետք է մոռացվեն, սակայն, կարծում ենք, հայ եւ թուրք ժողովուրդների համար ժամանակն է միասին աշխատելու` ձեռնամուխ լինելով ընդհանուր պատմությանը: Մենք խրախուսում ենք ցանկացած գործընթաց, որը կօգնի նրանց դա անել բաց, անկեղծ եւ կառուցողական, սակայն մեզ համար օգտակար չի լինի առաջ գնալ ենթադրությունների մեջ», ասել է արտաքին գործերի եւ համագործակցության հարցերով նախարար Դեյվիդ Հաուելը: «Ֆրանսիան արդեն ճանաչել է ցեղասպանությունը: Մեկուկես միլիոն մարդ սպանվել են 1915-ին: Ես հենց նոր եմ վերադարձել Հայաստանից, որտեղ եղել եմ Ցեղասպանության թանգարանում: Համոզված եմ, որ պալատի անդամներից շատերն այցելել են Հոլոքոստի թանգարան: Այն ոչ պակաս հուզիչ, ցնցող եւ սարսափեցնող է, քան Հոլոքոստի թանգարանը: Գոյություն ունեն շատ ապացույցներ, միաժամանակ` հայտնի է եղել, թե ինչ է կատարվել: Այդ ժամանակ բոլոր երկրներում թերթերը գրել են հայերի կոտորածի մասին: Ժամանակն է, որ մենք ճանաչենք Հայոց ցեղասպանությունը», ասել է բարոնուհի **Շիլա Ֆլեդերը**: «Թուրքիայում այն լրագրողներն ու գրողները, ովքեր օգտագործում են «Հայոց ցեղասպանություն» տերմինը, դատական հետապնդման վտանգի են ենթարկվում, շատերը դատապարտվել են, դպրոցական դասագրքերում էլ մերժվում է Հայոց ցեղասպանությունը: Հասարակական քննարկումների եւ կրթության ոլորտում այդ գրաքննությունն ընդունելի չէ մի ազգի համար, ով հույս ունի անդամակցել Եվրոմիությանը», նշել է բարոնուհի **Քերոլայն Քոքսը**:

# Հաջողված այց` ծայրահեղական տրամադրություններով

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Շուրջ 100 տարի անց Ամենայն հայոց կաթողիկոսը հովվապետական այց կատարեց Վիրահայոց թեմ: Վեհափառ Գարեգին Երկրորդի այցելությունը, հովվապետականից բացի, նաեւ միջեկեղեցական էր. Հայ առաքելական եկեղեցին իրոք լրջագույն հարցեր ուներ եւ ունի` քննարկելու վրաց ուղղափառ եկեղեցու հովվապետի հետ: Հետեւաբար պատահական չէ, որ Հայոց կաթողիկոսի այցը Վրաստան ուշադրության կենտրոնում էր, եւ երեկ Մայր աթոռում լրագրողների հետ հանդիպման ժամանակ այդ այցելությունից ստացած տպավորություններ հայտնեցին Մայր աթոռի դիվանապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանն ու Հայաստանի Աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Ընդհանուր առմամբ կաթողիկոսի այցը գնահատելով հաջողված, Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը այդուհանդերձ ընդգծեց, որ վրաց եկեղեցում առկա են ծայրահեղական տրամադրություններ: Մասնավորապես կոմյունիկեն, որը Վեհափառի այցի օրերին տարածվեց լրատվամիջոցներում` որպես արդեն երկու եկեղեցիների միջեւ ստորագրված փաստաթուղթ, «ընդամենը վրացական կողմի ցանկությունն էր»: «Անշուշտ կար պայմանավորվածություն, որ եթե միակարծություն ձեւավորվի, որեւէ**




**փաստաթուղթ հնարավոր է ստորագրել, սակայն առաջացել են որոշ տարակարծություններ, հետեւաբար` որեւէ կոմյունիկե չի ստորագրվել», շեշտեց Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Իսկ տարակարծություններ առաջացել են այն պատճառով, որ հայկական կողմը` նաեւ Վրաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ, պահանջել է Վրաստանում Հայ առաքելական եկեղեցու թեմին իրավական կարգավիճակի շնորհում, հայկական եկեղեցիների վերադարձ եւ փլուզված կամ վթարային վիճակում գտնվող հայկական եկեղեցիների նկատմամբ բարձր հոգատարություն: Ըստ Մայր աթոռի դիվանապետի` Սաակաշվիլին անձամբ խոստացել է լուծում տալ այս հարցերին, սակայն, փաստորեն, հենց այս ամենի հետ կապված` վրաց եկեղեցու ունեցած դիրքորոշման պատճառով, երկու եկեղեցիների միջեւ կոմյունիկե չի ստորագրվել: «Վրացական կողմը, առավելապես շուկայական, փոխադարձության սկզբունքի հիման վրա, հայկական կողմի բարձրացրած հարցերին լուծում տալու փոխարեն պահանջում էր Հայաստանից` հնարավորություն տալ այստեղ հիմնել վրացական վանք:**

*Տես էջ 3*

# Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինծառայություն չանցած անձանց` նոր հնարավորություն

Երեկ Ազգային ժողովի արտահերթ նիստում, սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանի** ներկայացմամբ, առաջարկվեց մեկ անգամ եւս փոփոխություն կատարել «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» օրենքում: Նոր հնարավորություն է տրվում մինչեւ 2011 թվականի մայիսի 1-ը 27 տարին լրացած եւ զինծառայությունից խուսափած քաղաքացիներին` մուծելով սահմանված վճարն ազատվելու քրեական հետապնդումից եւ արտերկրից մուտք գործելու հայրենիք: Ըստ գլխադասային հանձնաժողովի նախագահ **Հրայր Կարապետյանի`** մինչեւ այժմ մոտավոր հաշվարկով 4-5 հազար մարդ օգտվել են արդեն երրորդ անգամ փոփոխվող օրենքից: Այսինքն` օրենսդրական այս փոփոխությունը ոչ միայն բարոյական հենք ունի, այլեւ ֆինանսական կողմ` համապատասխան հիմնադրամում կուտակված գումարների տեսքով:

**Ս. Խ.**

# ԵՊՀ ռեկտոր վերընտրվեց Արամ Սիմոնյանը

Երեւանի պետական համալսարանում երեկ տեղի է ունեցել խորհրդի նիստ, որը վարել է ԵՊՀ խորհրդի նախագահ, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Նիստի օրակարգում ընդգրկված էր համալսարանի ռեկտորի ընտրության հարցը: Գաղտնի քվեարկությամբ ռեկտորի պաշտոնակատար Արամ Սիմոնյանն ընտրվել է ԵՊՀ ռեկտոր: Խորհրդի 60 անդամ կողմ է քվեարկել նրա թեկնածությանը, իսկ դեմ քվեարկողները եղել են 7 հոգի: 2 քվեաթերթիկ համարվել է անվավեր: Արամ Սիմոնյանն ընտրվել է 5 տարի ժամկետով: Ի դեպ, ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթում առաջադրված միակ թեկնածուն Արամ Սիմոնյանն էր:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակից տեղեկացանք, որ հանրապետության նախագահը շնորհավորել է նորընտիր ռեկտորին` վստահություն հայտնելով, որ առաջիկա 5 տարիներին մայր բուհն ունենալու է լուրջ ձեռքբերումներ: «Բոլորիս ակնկալիքը շատ մեծ է: Մենք ուզում ենք տեսնել բարձրակարգ պետական համալսարան: Սա՛ է մեր ցանկությունը, եւ ես իմ կողմից, կառավարությունն իր կողմից` վստահ ենք, որ խորհրդի բոլոր անդամներն անելու են ամեն ինչ, որպեսզի մենք հասնենք այս նպատակին», ասել է **Սերժ Սարգսյանը**:

**Ի. Պ.**

# Առաջիկա 18 ամիսներին սպասվում է շատ ուժեղ մագնիսական փոթորիկ

Առաջիկա 18 ամիսներին Երկրի վրա տեղի կունենա վերջին 150 տարվա ամենաուժեղ մագնիսական փոթորիկը, որը կապված է Արեգակի մակերեւութային խոշոր բռնկումների հետ: Բրիտանացի գիտնականներն արդեն համապատասխան նախազգուշացում են արել իրենց կառավարությանը, նշում է BBC-ն:

Կանխատեսումների համաձայն, մագնիսական փոթորիկը կարող է շարքից հանել կենսապահովման կարեւորագույն համակարգերը, մասնավորապես էլեկտրամատակարարման համակարգը եւ համակարգչային սարքավորումները:

Լոնդոնյան «Սանդեյ թայմս» շաբաթաթերթի տվյալներով, Մեծ Բրիտանիայի կառավարությունը անհրաժեշտության դեպքում արտակարգ իրավիճակներին վերաբերող հատուկ օրենքի հիման վրա անջատելու է էլեկտրականությունը երկրի ամբողջ տարածքում, որպեսզի նվազեցնի մոտալուտ մագնիսական փոթորկի վնասները:

Արեգակը ներկայումս բարձր ակտիվության փուլում է, որն իր գագաթնակետին կհասնի 2012-ին, գիտնականների հաշվարկների համաձայն, առաջիկա մագնիսական փոթորիկն ուժգնությամբ առնվազն հնգապատիկ կգերազանցի 1989-ի փոթորկին, որն էլեկտրականությունից զրկեց Քվեբեկի նահանգի (Կանադա) 6 մլն բնակիչների:

**Պ. Ք.**

# Մետրոյի ուղեվարձը հուլիսի 1-ից կդառնա 100 դրամ

*Երեւանի քաղաքապետը հայտնեց նաեւ, որ վերգետնյա տրանսպորտի ուղեվարձը չի թանկանա*

**Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց, որ հուլիսի 1-ից մետրոյի ուղեւորափոխադրման սակագինը կդառնա 100 դրամ: Նա Երեւանի քաղաքապետարանի այդ որոշումը բացատրեց այն բանով, որ պետության կողմից մետրոյի սուբսիդավորման գումարները տարեցտարի ավելանում են` 2004-ի 622 մլն դրամից 2010-ին հասնելով 1 մլրդ 840 մլն դրամի: Ըստ քաղաքապետի, մետրոպոլիտենի ծախսերի ավելացումը պայմանավորված է պահեստամասերի եւ նյութերի, էլեկտրաէներգիայի թանկացմամբ, գնաճով, աշխատակիցների վարձատրության ավելացմամբ: Այս ամենը հաշվի առնելով, 2011-ի առաջին եռամսյակում մեկ ուղեւորի փոխադրման ծախսը կազմել է 160 դրամ: Տեղեկացվեց նաեւ, որ Երեւանի մետրոպոլիտենով օրական 30 հազար ուղեւոր կատարում են 60 հազար ուղեւորություն: Տարեկան ուղեւորությունների թիվը կազմել է 20 մլն: Կարեն Կարապետյանը ավելացրեց, որ մետրոյի կանգառների զուգահեռ երթեւեկող վերգետնյա երթուղիները կպակասեն:**

**Խոսելով տրանսպորտի ոլորտի այլ խնդիրների մասին` Կարեն Կարապետյանը հայտնեց, որ այս տարվա սեպտեմբերին կավարտվի վերգետնյա տրանսպորտի երթուղային նոր ցանցի մշակումը: Կանցկացվեն նոր մրցույթներ, եւ, ըստ քաղաքապետի, կնվազեն միկրոավտոբուսների երթուղիները, կավելանան մեծ ու միջին տարողությամբ ավտոբուսները: Քաղաքի կենտրոնական մասի սպասարկումը հիմնականում կիրականացվի ավտոբուսներով, ինչը որոշակիորեն կթեթեւացնի կանգառների եւ փողոցների ծանրաբեռնվածությունը:**



**Անդրադառնալով տրանսպորտի սակագնային քաղաքականությանը` Կարեն Կարապետյանը վստահեցրեց, որ ուղեւորների համար 100 դրամ սակագինը չի փոխվի: Պետությունը կսուբսիդավորի քաղաքային տրանսպորտը, իսկ ուղեվարձի կանխիկ գանձման համակարգից անցում կկատարվի անկանխիկ` էլեկտրոնային քարտերով գանձման համակարգին:**

**Ըստ Երեւանի քաղաքապետի` տրոլեյբուսների ուղեվարձը կմնա անփոփոխ` 50 դրամ: Կպահպանվի նաեւ որոշակի խավերի համար տրանսպորտով անվճար երթեւեկելու արտոնությունը: Նոր ներկրվող ավտոբուսները հնարավորություն կունենան հաշմանդամների սայլակների տեղադրման համար:**

**Երեւանի քաղաքապետն անդրադարձավ նաեւ քաղաքի կանաչապատման, սանմաքրման, համատիրությունների գործունեության եւ այլ հարցերի:**

**«Ազգի» հարցն ուղղված Կարեն Կարապետյանին առնչվում էր իրացման գոտիների բնակիչների խնդրին: «Իրացման գոտիների տարածքների բնակիչները տարիներ շարունակ գտնվում են սեփական գույքը տնօրինելու սահմանափակման մեջ, քանի որ կառուցապատողները չեն կատարում իրենց պարտավորությունները: Կամ երբ իրացման գոտու ժամկետը լրանում է, խոսվում է մոտակա ամիսներին կրկին իրացման գոտի ճանաչելու մասին (ինչպես Կոզեռնում): Ե՞րբ է կարգավորվելու այս խնդիրը» մեր հարցին Երեւանի քաղաքապետը պատասխանեց, որ կառուցապատողները ունեն ժամկետներ, որոնք լրանալու դեպքում կարող են դիմել այն երկարացման համար: Եթե չեն կատարում իրենց պարտավորությունները, քաղաքապետարանը կարող է նաեւ հետ վերցնել նրանց տրված իրավունքը: Ըստ Կարեն Կարապետյանի, իրենք չեն ցանկանում դա անել, ինչը սակայն չի նշանակում, որ պետք է կառուցապատողների կողմից ամենաթողություն լինի բնակիչների նկատմամբ: «Աշխատում ենք, որ առաջիկա մեկ-երկու տարիներին այդ հարցն ամբողջությամբ կարգավորվի», եզրափակեց քաղաքապետը: Ինչը նշանակում է, որ վերոնշյալ տարածքների բնակիչները եւս 1-2 տարի պետք է զրկված լինեն տուն վաճառելու կամ կառուցելու հնարավորությունից, սպասելով կառուցապատողների ողորմածությանը` Երեւանի քաղաքապետարանի եւ կառավարության հովանավորությամբ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ընթացիկ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## Քաղաքական եւ կենցաղային աղբի մասին



«Իրավիճակի հանրագումարը Սովետաշենի աղբանոցն է, եւ չեմ կարծում, որ արտահերթ նստաշրջան պետք է գումարել աղբահանության օրենքը քննարկելու համար, քանի աղբահանության խնդիրը Հայաստանի թիվ մեկ պրոբլեմը չէ, այլ՝ աղբից հաց հավաքող մուրացկանների, այսինքն՝ աղքատության պրոբլեմն է: Արտահերթ նստաշրջան պետք է գումարել արտահերթ նշանակության խնդիրները քննարկելու եւ այդ հարցերին պատասխաններ տալու համար, եւ ոչ թե աղբահանության խնդիրը դարձնել դոմինանտ»: Այսպես խոսեց պատգամավոր **Վիկտոր Դալլաքյանը** երեկ Ազգային ժողովի արտահերթ նիստում, «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» օրենքի եւ հարակից նախագծերի փաթեթի առաջին ընթերցմամբ քննարկման ժամանակ, կառավարության հիմնավորմամբ՝ «աղբահանությունը չի համապատասխանում միջազգային չափանիշներին» ձեւակերպմանը հակադարձելով. «Իսկ թոշակների չափը, աշխատավարձերի չափը, նպաստների չափը համապատասխանո՞ւմ են միջազգային չափանիշներին, մարդիկ հա՞ց են ուտում, որ աղբ առաջանա: Հիմա դուք ի՞նչ եք քննարկում այս դահլիճում: Հայաստանը ունի լրջագույն պրոբլեմներ, դրանք պետք է քննարկի պառլամենտը»՝ վերջում եզրակացնելով, թե նախ քաղաքական աղբը պետք է մաքրել: Իսկ քննարկվողը այն փաթեթն էր, որը մեկ անգամ տապալվել էր ՝ քվորումի բացակայության պայմաններում, եւ անգամ որոշ օդիոզ շրջանակներ կանխատեսում էին, թե այս աղմկահարույց փաթեթի պատճառով կարող է արտահերթ ընտրությունների... հարց բացվել: Չէ, բարեհաջող քննարկվեց ընդամենը, եւ անգամ՝ տապալված օրինագծի շատ դրույթներ այժմ վերափոխված էին. եթե տապալված օրինագծով աղբի համար սակագին էր առաջարկվում 500 դրամը (այժմ 250 դրամ է), ապա նոր փաթեթում ըստ անձերի առավելագույնը 400 դրամ է սահմանվում, իսկ եթե որեւէ անձ չի հաշվառված տվյալ բնակության վայրում՝ աղբավճարը մեկ անձի համար է սահմանվում կամ ըստ մակերեսի՝ քառակուսի մետրի համար՝ առավելագույնը 25 դրամ: Աղբահանության վճարը պարտադիր է, վարձավճարի չափը պետք է սահմանի համայնքի ավագանին՝ ըստ տեղական առանձնահատկությունների: Հետագա պլանների տեսակետից (Երեւանի քաղաքապետն օրենքի ընդունումից հետո միջազգային տենդեր է հայտարարելու՝ Երեւանի աղբահանության եւ սանիտարական մաքրման կազմակերպման համար)՝ նաեւ սահմանվում է աղբավճար ըստ ծավալի՝ 1 խոր. մետր աղբի համար առավելագույնը 1700 դրամ, 1 տոննայի՝ 5000 դրամ:

Հիմնական զեկուցողը փոխքաղաքապետ Կամո Արեյանն էր, այս պարագան անընդունելի համարեց ՀՅԴ-ական **Արծվիկ Մինասյանը**՝ անկախ Արեյանի անձի ընդունելի լինելուց, քանի որ հարցը համահայաստանյան է: Սակայն իր եզրափակիչ ելույթում **Կ. Արեյանը** մասնանշեց, թե ընդհանրացումները կատարվում են ոչ թե մայրաքաղաքի, այլ ողջ Հայաստանի առումով, այնպես որ այդպիսի հարցադրում չպետք է լինի: ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանն** էլ լրջորեն փաթեթը բարելավելու մի շարք առաջարկներ ներկայացրեց: Նա առաջարկում էր՝ չվճարող բաժանորդի հետ մեկտեղ պատասխանատվություն սահմանել հարկի վճարումը տապալած պետության համար, ամրագրել համայնքում բնակվելու հանգամանքը՝ որպես հարկ վճարելու պայման, քանի որ անընդունելի է գրանցված, բայց չբնակվող անձից վճար գանձելը, չվճարված պարտքի համար փոխհատուցումը հետին թվով երեք տարուց ավելի չսահմանել: Իսկ սակագնի եւ չվճարված վճարի հաշվարկը, ըստ Հ. Աբրահամյանի առաջարկի, պետք է կատարի համայնքը, անճիշտ հաշվարկի դեպքում վնասը հենց հաշվարկ կատարողն էլ պետք է փոխհատուցի եւ այլն:

Տեսնենք, թե այսօր ինչ պատկեր կլինի քվեարկության ժամանակ, մանավանդ որ երեկ 80-ից մի փոքր ավելի պատգամավորներ էին եկել արտահերթ նիստին, ընդ որում հիմնական եկողներից շատերը չկային, բայց ներկա էին այնպիսի էկզոտիկ պատգամավորներ, ինչպես Լեւոն Սարգսյանը, Տիգրան Արզաքանցյանն ու Սամվել Ալեքսանյանն էին:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԿՆԱԿԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ

## Հուրախություն երթուղային տաքսիների՝ մետրոյի ուղեվարձը թանկանալու է

**Թանկացումների ու գնաճի համատարած մթնոլորտում մեր պաշտոնյաները, ոչ ավել, ոչ պակաս, որոշեցին թանկացնել նաեւ մետրոյի ուղեվարձը: Հուլիսի 1-ից քաղաքացիները ստիպված կլինեն 1 ժետոնի համար վճարել ոչ թե 50, այլ 100 դրամ: Այսինքն՝ մետրոյի ուղեվարձը թանկանալու է կրկնակի: Երբ 2003-ին մետրոյի ուղեվարձը թանկացավ ընդամենը 10 դրամով՝ 40 դրամից դարձավ 50 դրամ, մետրոյից օգտվողները դրան մեծ ուշադրություն չդարձրին, սակայն քաղաքապետի երեկվա հայտարարությունը, թե մետրոյի սակագինը թանկանալու է կրկնակի, քաղաքացիների համար ցնցող նորություն էր: Եթե մեր պաշտոնյաները չեն հիշում, թե վերջին անգամ երբ են նստել Երեւանի մետրոն, դա չի նշանակում, որ այն դադարել է հարմարավետ ու «պրիստիժ» տրանսպորտ լինելուց:**

**Այսօր, սակայն, մետրոյից ավելի շատ օգտվում են ուսանողներն ու սոցիալապես անապահով բնակիչները, որոնք ուղեվարձի թանկացումից հետո միգուցե նախընտրեն օգտվել արդեն երթուղային տաքսիներից: Թեեւ քաղաքապետարանը նախատեսում է նվազեցնել մետրոյի կանգառներին զուգահեռ երթեւեկող երթուղայինների թիվը, սակայն դրա շնորհիվ մետրոյի ուղեւորները դժվար թե ավելանան: Բացի դրանից՝ քաղաքապետարանը վստահություն չի ներշնչում, թե կկարողանա պայքարի մեջ մտնել «գծի տերերի» հետ: Ամեն դեպքում՝ եթե անգամ մի քանի երթուղային տաքսիներ գծերից դուրս հանվեն, միեւնույնն է՝ այդպես մետրոն ավելի գրավիչ դարձնել չեն կարող, որովհետեւ հազարավոր քաղաքացիներ մետրոյից օգտվում են զուտ ավելի էժան սակագնի համար: Նույնիսկ ձմռանը մարդիկ, բաց թողելով մի քանի երթուղային տաքսիներ, ժամերով կանգնում են կանգառներում ու սպասում տրոլեյբուսի, որպեսզի երթեւեկեն ոչ թե 100, այլ 50 դրամով: Հուրախություն մայրաքաղաքի բնակիչների՝ տրոլեյբուսի ուղեվարձն առաջիկայում չի թանկանալու, սակայն այսօր մայրաքաղաքում երթեւեկող տրոլեյբուսներն այնքան քիչ են, որ կարելի է մատների վրա հաշվել:**

**Ինչպես տեսնում ենք, ամենամատչելի ու հասանելի տրանսպորտն առայժմ մետրոն է, որից, ի գիտություն մեր պաշտոնյաների, օգտվողները սոցիալապես անապահով, աղքատ բնակիչներն են, որոնց համար եւս 50 դրամ վճարելը ծանր է, շատերի համար՝ նույնիսկ անհնարին: Եթե քաղաքապետարանն իր բացատրություններում նշում է, թե ուրիշ երկրներում մետրոյի ուղեվարձն ավելի թանկ է, քան Հայաստանում, ապա նույն քաղաքապետարանը թող բարի լինի խոսելու նաեւ այդ երկրներում ապրող մարդկանց եկամուտներից ու աշխատավարձերից: Եվ միայն այդ ֆոնի վրա հնարավոր կլինի որոշել, թե իրականում որտե՞ղ է մետրոյի ամենաթանկ ուղեվարձը, եւ Հայաստանից բացի ուրիշ էլ ո՞ր երկրում են հակահիգիենիկ երթուղային տաքսիները կաթվածահար արել ոչ միայն մայրաքաղաքի երթեւեկությունը, այլեւ մարդկանց նյարդերը:**

**Ներկայումս մայրաքաղաքում ամենաանվտանգ ու արագ գործող տրանսպորտը մետրոպոլիտենն է: Նույնիսկ տաքսիները քաղաքի մի ծայրից մյուսը չեն կարող հասնել նույնքան արագ, որքան մետրոն: Բացի դրանից՝ մեզանում մետրոն ամենահիգիենիկ տրանսպորտն է: Սակայն մետրոյի բոլոր այս դրական հատկանիշները բնակչությանը չեն գրավում այնպես, ինչպես գրավում է էժան սակագինը: Հետեւաբար ուղեվարձի թանկացումից հետո, կամա թե ակամա, մետրոյի ուղեւորները նվազելու են:**

**Ստացվում է, որ մեր պաշտոնյաները ոչ թե պայքարում են երթուղային տաքսիների դեմ, այլ հակառակը՝ ապահովում են նրանց նոր ուղեւորներով:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## Սողացող թանկացում

Երեկ փաստորեն սակագների թանկացման օր կարելի էր անվանել, քանի որ, բացի մետրոյի տեղափոխման սակագնի թանկացումից, մի սողացող թանկացում էլ օրենսդրական նախաձեռնության տեսք ուներ. Ազգային ժողով, արտահերթի բերված «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» օրենքի նախագծով ավտոկայանատեղում մեքենա կայանելու յուրաքանչյուր մեկ ժամը կարժենա մինչեւ 500 դրամ: Շարունակելով կառավարության նախաձեռնություն -օրինագծով սահմանվող սակագների թվարկումը՝ նշենք, որ ավտոկայանատեղում մեկ օրվա համար մինչեւ 3 հազար դրամ, մեկ շաբաթվա համար՝ 6 հազար, մեկ ամսվա համար՝ 30 հազար դրամ վարձավճարի առավելագույն սակագին է սահմանվում: Մեկ տարի ավտոտրանսպորտային միջոցը ավտոկայանում կայանելու համար 120 հազար դրամի սակագինն է նշվում: **Ս. Խ.**

## Ի՞նչ նոր արտադրություն են ստեղծել

*Ավելացված արժեքի հարկի վճարման հետաձգման արտոնություն ստացած ընկերությունները*

**Ճգնաժամային 2008-ը ստիպեց վերանայել մեր երկրի տնտեսական քաղաքականությունը, քայլեր ձեռնարկել տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ՝ առավել կարեւորելով իրական հատվածի զարգացումը: Կառավարության կողմից արդյունաբերության զարգացման ուղղությամբ խրախուսիչ քայլերից էր 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում ընկերությունների համար ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումը 3 տարի ժամկետով երկարաձգելու որոշումը: 2009-2011-ին, արտադրություն ստեղծելու կամ ընդլայնելու ծրագրեր ունեցող 15 ընկերություններ օգտվել են այդ արտոնությունից: Ի՞նչ արդյունքներ են արձանագրել նրանք: Մեր այս հարցի առնչությամբ էկոնոմիկայի նախարարությունից ստացանք հետեւյալ տեղեկատվությունը:**

**2009-ին ԱԱՀ վճարման արտոնություն ստացած ընկերություններից «Նասֆուդ» ընկերությունը մսամթերքի արտադրության նոր գործարան պետք է կառուցեր Երեւանի Նոր Նորք շրջանում: Ներկայումս կառուցվել են բետոնե եւ արդյունաբերական հատակները, տեղադրվել տաքացման, սառեցման եւ օդորակման համակարգերը, մոնտաժվել էլեկտրասնուցման համակարգը: Գործարանի շահագործումը նախատեսված է հունիսի վերջին: Սյունիքի մարզի Շամբ գյուղում «Շամբ բիզնես» ընկերությունը եւս արդեն կառուցել է գյուղմթերքների վերամշակման նոր գործարան: Սննդարդյունաբերական մեկ այլ՝ «Արաքս թռչնաֆաբրիկա» ընկերությունը կառուցում է գյուղմթերքների վերամշակման արտադրամաս, որի մեկնարկը նախատեսված էր 2010-ի վերջին: Սակայն աշխատանքները հետաձգվել են ապրանքների մատակարար ընկերության պատճառով, եւ ծրագրի մեկնարկը տեղի կունենա 2011-ի վերջին:**

**«Յուքոմ» ընկերությունը ներդրել է WiMax, ինչպես նաեւ «Էրիկսոն» ընկերության հետ համատեղ՝ GPON տեխնոլոգիան, ինչը հնարավորություն է տալիս մեկ լարի միջոցով մատուցել 3 ծառայություն՝ IP հեռուստատեսություն, ինտերնետ եւ ֆիքսված հեռախոսակապ: Նախատեսված 700 մուտքերի փոխարեն ապահովվել է ինտերնետ հասանելիություն 5700 մուտքերում, իսկ աշխատատեղերի քանակը նախատեսված 120-ի փոխարեն հասել է 238-ի:**

**2009-ին ԱԱՀ վճարման արտոնություն ստացած «Իստեյս մենեջմենտ ընդ ադմինիսթրեյշն քամփնի» ընկերությունն իրականացնում է «Տաթեւի վանքային համալիրի վերականգնման» ծրագիրը, ներառյալ ճոպանուղու կառուցումը: Ճոպանուղին բացվեց անցյալ տարի, իսկ այլ ենթակառուցվածքների շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:**

**«Բիգա» ընկերությունը, համագործակցելով հոլանդական Christians Group ընկերության հետ, կառուցել է շամպինիոն սնկի արտադրամաս՝ կատարելով մոտ 1 մլն եվրոյի ներդրումներ: 2010-ին է ԱԱՀ վճարման հետաձգման արտոնություն ստացել նաեւ «Գոլդն Գրեյպ Արմաս» ընկերությունը: Վերջինս նախատեսում է Արագածոտնի մարզի 180 հա տարածքում իրականացնել խաղողի աճեցման, գինու եւ կոնյակի արտադրություն: Ներկայումս ձեռք են բերվել գյուղտեխնիկա եւ մարդատար մեքենաներ, տնկվել են մոտ 90 հզ. խաղողի վազ եւ մոտ 7,5 հզ. պտղատու ծառ, ավարտվել է գործարանի շինության մետաղական կոնստրուկցիաների տեղադրումը: Ծրագրի մեկնարկի նախնական ժամկետ է սահմանվել 2012-ի սկիզբը:**

**Ապակե տարաների արտադրության «Սարանիտս» ընկերությունը կառուցել է նոր արտադրամաս, որի շնորհիվ արտադրական հզորություններն ավելացվել են մոտ 50 տոկոսով: «Սպայկա» ընկերության ներդրումային ծրագրով Հայաստանից թարմ մրգերի արտահանման նպատակով կառուցվել է նախնական սառեցման եւ փաթեթավորման սարքավորումներով հագեցած արտադրամաս: Ընկերության մեկ այլ ծրագրով նախատեսվում է մոտ 24 հա ջերմոցային համալիրի կառուցում, վերամշակող արտադրամասի ստեղծում եւ լոգիստիկ համակարգի ապահովում: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2013-ին: «Կարոլինա» («Արարատ սննդի կոմբինատ») ընկերությունը Երեւանում հիմնել է բնական հյութերի արտադրության ժամանակակից գործարան, ստեղծելով մոտ 60 աշխատատեղ: Գործարանը բացվել է այս տարվա ապրիլին: «Ջերմուկ ինթերնեյշնլը» Երեւանում հունիսին բացել է զովացուցիչ ըմպելիքների գործարան:**

**Դեղարտադրող «Լիկվոր» ընկերությունը կառուցում է նոր մասնաշենք, որը նախատեսվում է բացել 2011-ի երկրորդ կիսամյակում: «Ապառաժ Մայնինգ» ընկերության ներդրումային ծրագրով էմուլսիոն պայթուցիկ նյութերի արտադրության շենքի կառուցման աշխատանքները նույնպես ընթացքի մեջ են: «Նուբարաշենի թռչնաբուծական ֆաբրիկա» Նուբարաշենի շրջանում գտնվող նախկին ֆաբրիկայի տարածքում սկսել է թռչնամսի արտադրամասի կառուցումը: «Ամստեր Ֆլաուերս» ընկերությունը նախատեսում է մինչեւ 2011-ի ավարտը, հոլանդական «Ամերլաաս քոնսթրաքշն» ընկերության հետ համագործակցելով, ջերմոցային համալիր կառուցել:**

**Համաձայն էկոնոմիկայի նախարարության տրամադրած տվյալների, կառավարության կողմից ԱԱՀ վճարման արտոնություն ստացած 15 ընկերությունների 16 ներդրումային ծրագրերից սպասվող ներդրումները կազմում են մոտ 59 մլրդ դրամ, ինչի շնորհիվ պետք է ստեղծվեն 1686 նոր աշխատատեղեր: Ներկայումս արդեն ստեղծվել է 954 աշխատատեղ:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

«Տունտունիկը դա հետեւյալն է», բացատրեց ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանը**՝ մեկնաբանելով իր ասածը ՀԱԿ-ի հետ կապված եւ դրան հաջորդած նախագահ Սարգսյանի անդրադարձը՝ ՀԱԿ-ի հետ երկխոսելու (եւ ոչ թե բանակցելու) առումով. «Բացարձակ իրավիճակներ չկան, բայց երազային մոտեցումներ կա՛ն երեխեքի մոտ: Բանակցել ինչ է նշանակում, տարբեր պետություննե՞ր ենք, բանակցելը ծիծաղելի է: Մի կողմից ցայտնոտի մեջ են, մյուս կողմից դաշտն էնպիսին է, որ մերժելի չի կարող դարձնել (երկխոսությունը-Մ.Խ.), առավել եւս՝ նախագահի արձանագրումներից հետո: ժեր, բայց իրավունքների տեսակետից բոլորը հավասար են: Այսինքն՝ երկխոսությունը տրամաբանորե՛ն բանակցություն չէ: Մենք փորձում ենք բոլորի հետ խոսել: Մանավանդ խորհրդարանական կուսակցությունները ամեն օր են երկխոսում, նաեւ՝ քննարկումներում եւ մամուլում: Դա անընդհատական պրոցես է, մեկանգամյա չէ»:

Վերջերս նախկին արտգործնախարար **Վարդան Օսկանյանն** ասել էր, թե Կազանում տեղի ունենալիքի առումով այնքան լուրջ է վիճակը, որ պետք է Կազան գնալուց առաջ հրազեկել ժողովրդին, նրա հետ խոսել. «Սա ուրիշ սցենար է, մարդիկ տարիներ շարունակ այսօր կարողանում է յուրացնել եւ վերլուծել եւ գործածել ՀԱԿ-ը, էնպես որ Չավուշօղլուի կամ մյուսների վերլուծություններով չենք շարժվում, մենք ընդամենը վճռական ենք»: Կրկին հիշեցրինք՝ եվրոպական կառույցի ղեկավար է, ի վերջո կարող է վնասել... «Մի քանի ամիս հետո չի լինի, մարդիկ գնում են՝ չեն մնում»:

Ըստ Գ. Սահակյանի՝ բացառված չէ, որ Կազանում ինչ-որ փաստաթուղթ ստորագրվի, բայց հստակ փաստաթղթի ստորագրելու խնդիր, իր կարծիքով, հազիվ թե լինի. քննարկումները, նաեւ համանախագահ երկրների նախագահների հայտարարությունը

# «Տարբեր պետություննե՞ր ենք, որ բանակցենք»

## *Գալուստ Սահակյանը երկխոսության ու Կազանի մասին*

Կարծում եմ, քաղաքական դաշտի կայունացման պրոցեսների վրա պետք է աշխատենք: Նաեւ բանաձեւումներ կային նախագահի խոսքի մեջ, դրանք նաեւ ուղենարներ էին, այսինքն՝ հնարավոր եմ համարում, որ առաջիկայում քաղաքական փոխհարաբերությունների նոր մշակույթ ձեւավորվի: Յուրաքանչյուր քաղաքական ուժ ինքն է որոշում, թե իր ո՞ր անդամին այդ դերակատարումն (երկխոսելու-Մ.Խ.) ապահովի: Իսկ նախագահի բանաձեւումը դիպուկ էր, տեղին եւ ժամանակին, բայց թե ի՞նչ կխոսեն-ի՞նչ կասեն՝ դրան էլ պետք չէ տուրք տալ, որովհետեւ նրանց մոտ էլ մտահոգություններ եւ մտավախություններ կան, դրանից ելնելով՝ պիտի կարողանան իրենց իրացնել նաեւ հասարակության մեջ: Դժվար է գնալ մի ճանապարհով՝ երկիրը ավազակապետություն համարել, հետո գնալ հեղափոխական կոչեր անել, հետո ասել, որ գալիս ենք, սա վերջն է, հաջորդ միտինգին էսպես կանենք, եւ հետո գլխի ընկնել, որ կան փոխհարաբերությունների դասական ձեւեր, եւ որ իշխանափոխության ֆորմատը ամբողջ աշխարհում եվրոպական երկրների համար մեկն է՝ ընտրությունները: Նախապատրաստվում են ընդամենն ընտրությունների: Փորձ է կատարվում մոնոպոլիզացնել նաեւ քաղաքական պրոցեսները: Մեր խոսքը, եւ ընդհանրապես մեր մոտեցումները կախված են քաղաքական դաշտից եւ քաղաքական ուժերից, քաղաքական դաշտում կան մեծ եւ փոքր քաղաքական ուժ-իշխանության մեջ են լինում, հետո որ իշխանությունը թողնում են, մտածում են՝ բյուրեղացան արդեն: Չեն մտածում, որ ճանապարհ են քայլել, եւ ոտնահետքերը որեւէ մեկը չի կարող հանել: Չի կարելի էդպես բարդույթների մեջ մտնել եւ որակավորել ամեն ինչը: Կազանի հանդիպումն այն հանդիպումը չէ, որ որոշակի խոսք պիտի ասենք (եւ մանավանդ՝ տասնյակ տարիներ ինքն էր այդ խոսքն ասում), ու ժողովրդին հայտարարություն պետք է անել, տագնապի մեջ գցել՝ թե՛ դրական, թե բացասական առումներով: Դա սովորական գործընթաց է, ընդ որում՝ մենք բանակցությունների որոշակի առաջընթաց ենք տեսնում. մոտեցումներ են, աշխարհը գնալով ավելի քաղաքակիրթ մոտեցումներ է ձեւավորում, երեւի մենք մի քիչ էլ պիտի սպասենք-հասկանանք, թե բոլոր շահագրգիռ պետությունների քաղաքական նպատակները որքան համադրելի են այս հարցում, մանավանդ երբեմն-երբեմն տնտեսական փոխհարաբերություններն ավելի վերարժեքային են դառնում: Աշխարհն էլ պիտի կարողանա մեր ժողովրդի հետ կապված շատ բան ընդունել: Ղարաբաղյան խնդիրը հենց այդ թնջուկներից մեկն է»:

Հիշեցրինք՝ Չավուշօղլուն էլ Ղարաբաղի հարցը հենց մի օր առաջ կապել էր հայ-թուրքական հարաբերությունների հետ, Կազանում էլ համաձայնագրի է սպասում. Գ. Սահակյանը հարցը պտտեցրեց քաղաքական ենթատեքստում. «Ադրբեջանական մամուլի ողջ էդ ֆոնը հիմնականում ուղղված էին ընդհանրապես բացառելու ուժի կիրառումից խոսելը, դա է ամենակարեւորը, քննարկումներն էլ գնալու են երկու՝ ազգերի ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության դրույթները քննարկելու շուրջ. «Պատերազմի ժամանակ 58 կամ մի քիչ ավելի պետություններ կային, էսօր 218 պետություններ են, որոնք ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա են ստեղծվել: Տարածքային ամբողջականությունն անցյալ է, եթե ինքնորոշվում է՝ այդ տարածքն արդեն մերն է...», հույս տվեց Գ. Սահակյանը:

«**Ազգը**» հետաքրքրվեց ՀՀԿ համամասնական՝ իբր արդեն գոյություն ունեցող երիտասարդական համամասնական ցուցակի մասին, որտեղ հին ՀՀԿ-ականներից ոչ ոքի անունն ընդգրկված չէ. «Մեր ցուցակը կսկսի ձեւավորվել 2012 թվականի հունվարի կեսերից կամ հունվարից հետո: Որեւէ ցուցակի ձեւավորմամբ մենք չենք զբաղվում, եւ դրա անհրաժեշտությունը չկա: Կուսակցությունն իր սկզբունքներն ունի, իր պրոյեկտներն ունի, պարզապես անձնավորման խնդիր մենք չունենք այսօր ցուցակների առումով: Փորձում են ժամանակից շուտ իրենց քաղաքական նպատակները հագեցնել՝ մեր մասին խոսելով երեւի: Ցուցակների ձեւավորումը ինչպես միշտ կլինի եւ ես էլ, կարծում եմ, մասնակցելու եմ», եզրափակեց Գալուստ Սահակյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հաջողված այց՝ ծայրահեղական տրամադրություններով

*1-ին էջից*

Այսինքն, եթե մեր եկեղեցու պահանջները միտված են զուտ վիրահայ համայնքի հոգեւոր պահանջմունքների բավարարմանը, ապա վրաց եկեղեցին առաջնորդվում է ավելի կալվածատիրական ցանկություններով», նկատեց Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Այս կապակցությամբ **Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը** հավելեց. «Մայր աթոռը երբեք դեմ չի եղել միջեկեղեցական հանձնաժողով ստեղծելու մտքին, որը կքննարկի եւ լուծում կտա այս հարցերին, այլ ոչ թե կլինի հանձնաժողով՝ հանձնաժողով լինելու համար: Եթե նրանք (նկատի ունի վրաց ուղղափառ եկեղեցուն.- Հ.Ա.) կարողանան ապացուցել փաստաթղթերով, որ Հայաստանում գտնվող այս կամ այն եկեղեցին պատկանում է իրենց, ապա խնդիր չեմ տեսնում», նշեց Եզնիկ սրբազանը:

Երկու հոգեւորականներն էլ նկատեցին, որ Վեհափառի այցը Վրաստան ամենեւին էլ չէր նշանակում եւ չէր կարող նշանակել, որ բոլոր եղած խնդիրները պետք է միանգամից լուծվեն. «Պարզապես սա մի հանգրվան էր՝ փոխվստահությունը ամրապնդելու, սա հիմք էր՝ նախապաշարումներից ազատվելու համար», նշեց Մայր աթոռի դիվանապետը: Իսկ որ խնդիրները երկու եկեղեցիների միջեւ պետք է լուծվեն՝ Արշակ եպիսկոպոսը վստահ է. «Նման լավատեսություն ես ունեմ նախ իմ քրիստոնեական հավատքի շնորհիվ, այնուհետեւ՝ հիմնվելով երկկողմ միջպետական դրական գնահատված հարաբերությունների վրա, ինչը, սակայն, դժբախտաբար չի կարելի ասել երկկողմ եկեղեցական հարաբերությունների մասին, եւ Վրաստանի նախագահի անձնական հավաստիացումների վրա», նշեց Մայր աթոռի դիվանապետը:

Անդրադառնալով վրաց պատրիարք Իլյա Երկրորդի վերջին հայտարարությանը, որտեղ նշել էր, թե «Հայոց կաթողիկոսը երիտասարդ է եւ անփորձ ու ցանկանում է բոլոր հարցերին շուտ լուծում տալ», Արշակ սրբազանը նախ կրկնեց ավելի վաղ Մայր աթոռի տեղեկատվական կենտրոնի տարածած հայտարարությունը, որտեղ ասված էր. «Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը հարգում է Իլյա Երկրորդի տարիքն ու փորձը ու պատշաճ չի համարում մեկնաբանել այդ հայտարարությունը», այնուհետեւ նշեց. «Պատշաճ չէ հարեւան երկրի եկեղեցու ղեկավարի նկատմամբ նման հայտարարությամբ հանդես գալ: Կարծում ենք՝ սա լավագույն պատասխանն է ու մեկնաբանությունը»:

Ընդհանուր առմամբ՝ 100 տարի ընդմիջումով իրականացված Հայ առաքելական եկեղեցու առաջնորդի այցելությունը Վրաստան եւ Վիրահայոց թեմ, կարելի է բնութագրել հաջողված՝ հովվապետական այցի կտրվածքով, մասնավորապես Թբիլիսիում բացվեց Սուրբ Էջմիածին եկեղեցին, եւ «միակողմանի ծայրահեղական»՝ միջեկեղեցականի կտրվածքով: Ընդ որում այցելությունը, փաստորեն, ուղեկցվեց նաեւ ապատեղեկատվությամբ, թե իբր կոմյունիկե է ստորագրվել, եւ «ոչ պատշաճ» հայտարարությամբ՝ վրաց պատրիարքի անունից: Այս վերջինն, ինչ խոսք, հարիր չէ քույր հռչակված եկեղեցուն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Հայաստանում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի սեփական թղթակից Տ. Հ. Լիլոյանին

Թանկագին Տիգրան Հենրիկի,

Ռուսաստանի հայերի միության անունից եւ անձամբ իմ կողմից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ հիանալի հոբելյանի՝ 50-ամյակի առթիվ:

Դուք, առանց չափազանցության, մեր ժողովրդի ամենափայլուն, բազմակողմանի մտավորականներից մեկն եք: Ձեր ճակատագիրը կապելով լրագրությանը եւ մշտապես կատարելագործելով սեփական վարպետությունը, Դուք ոչ միայն հասել եք զգալի մասնագիտական բարձունքների, այլեւ մեծ հեղինակություն եք վայելում գործընկերների, պետական եւ քաղաքական գործիչների, լայն հասարակայնության շրջանում:

Երկար ժամանակ՝ 20 տարի, Դուք Հայաստանում ներկայացնում եք հայտնի լրատվական գործակալությունը, իսկ ռուսական լրատվատարածքում՝ Հայաստանը, ամեն օր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի նորությունների ժապավենը հարստացնելով մեր պատմական Հայրենիքի իրադարձություններին առնչվող հավաստի եւ օպերատիվ տեղեկատվությամբ:

Ձեր տաղանդն ու վարպետությունը ըստ արժանվույն նշվել են բազմաթիվ հեղինակավոր պարգեւներով, որոնց թվում այսուհետեւ կլինի նաեւ Ռուսաստանի հայերի միության «Արծաթե խաչ» շքանշանը, որով Դուք պարգեւատրվում եք հոբելյանի առթիվ եւ լրագրողական ու հասարակական ակտիվ գործունեության, ՌՀՄ հեղինակության աճի տեղեկատվական ապահովման աշխատանքի եւ Հայաստան-Ռուսաստան բարեկամական հարաբերությունների զարգացման համար:

Թանկագին Տիգրան, անկեղծորեն Ձեզ մաղթում եմ քաջառողջություն, անսպառ կենսական էներգիա եւ մասնագիտական նոր ձեռքբերումներ ու հաջողություն Ձեր բոլոր ձեռնարկումներում ու ձգտումներում:

Անկեղծ հարգանքով՝

ԱՐԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՌՀՄ եւ ՀՀԿ նախագահ
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարի կամքի դեսպան

# Samsung Galaxy SII՝ նորույթ հայաստանյան շուկայում

«Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում երեկ տեղի ունեցավ Samsung Galaxy SII սմարթֆոնի հայաստանյան շնորհանդեսը: Հենց երեկվանից էլ մեկնարկեց սմարթֆոնների պաշտոնական վաճառքը: Շնորհանդեսի շրջանակներում հյուրանոցում երեկ կազմակերպվել էր նաեւ մամուլի ասուլիս, որի ընթացքում «Samsung Electronics»-ի կովկասյան գլխավոր ներկայացուցիչ **Օհ Սունգ Կիմը** նշեց, որ Samsung Galaxy SII սմարթֆոնները հայաստանյան շուկա նոր խոսք կբերեն. «Առհասարակ, այստեղ սմարթֆոնների ներմուծումը կայուն ու մեծ աճ է ցուցաբերում: «Samsung Electronics»-ը Հայաստանի շուկային կապված մեծ ծրագրեր ունի: Նախ ուզում ենք տեղի շուկային ներկայացնել Samsung Galaxy SII եւ Galaxi S X սմարթֆոնները: Մեր հիմնական նպատակն է սպառողների համար բջջային հեռախոսների օգտագործումը դարձնել ավելի հարմարավետ եւ դառնալ ամենասիրելի բրենդը»:

Օհ Սունգ Կիմի փոխանցմամբ՝ Կորեայում միայն մի ամսվա ընթացքում վաճառվել է ավելի քան 800 հազար Samsung Galaxy SII սմարթֆոն. «Հուսով եմ՝ Հայաստանում էլ նման հաջողություն կունենանք»:

Նորագույն Samsung Galaxy SII-ը բարձր արտադրողականությամբ սմարթֆոն է, որի առանձնահատկություններից են Samsung Hubs բջջային ծառայությունները: Դրանց օգնությամբ սպառողները կարող են օգտվել լայնածավալ ժամանցային կատալոգներից, խաղերից ու սոցիալական կայքերից: Samsung Galaxy SII-ը (GT-I9100 մոդել) ունի երկմիջուկանի (Dual Core) պրոցեսոր եւ գործում է Android 2.3 (Gingerbread) օպերացիոն համակարգով:

Հայաստանում «Samsung Electronics»-ի պաշտոնական ներկայացուցչության ղեկավար **Անդրանիկ Շահբազյանի** խոսքով՝ ներկայումս շուկայում գործող բոլոր սմարթֆոնների մեջ իր հնարավորություններով առաջատարը հենց Galaxy S II սմարթֆոնն է: Ինչ վերաբերում է նորագույն բջջային հեռախոսների արժեքին, Անդրանիկ Շահբազյանը կարծում է, որ Galaxy SII սմարթֆոնները կվաճառվեն 320 հազար դրամի սահմաններում:



ՖՈՏՈԼ

Հայաստանում Samsung Galaxy SII սմարթֆոնները վաճառվելու են «Samsung» ընկերության բոլոր պաշտոնական խանութ-սրահներում, այդ թվում՝ «Մոբայլ Սենթր» եւ Samsung ֆիրմայի խանութներում, «Օրանժի» ու «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններում:

Ի. Պ.

## Պատվաստում

# Կան բժիշկներ, որոնք պատվաստումների դեմ սկսել են գաղտնի քարոզչություն

Պատվաստանյութերի ստեղծումը գիտության կարեւոր նվաճումներից է: Բուժիչ պատվաստանյութերը բազմաթիվ մարդկանց կյանք են փրկել: Մարդկության համար կարեւոր նշանակություն ունեն նաեւ կանխարգելիչ պատվաստումները:

Չափահասների համար նախատեսված կանխարգելիչ պատվաստումներին **«Ազգը»** հանգամանալից անդրադարձել է նախորդ համարներից մեկում: Սակայն մեզանում կանխարգելիչ պատվաստումներ օրացուցային պլանով նախատեսված են ոչ միայն չափահասների, այլեւ երեխաների համար, որոնք ավելի թույլ ու խոցելի են: Ըստ պատվաստումների պլանային օրացույցի՝ մեր երկրում երեխան իր առաջին պատվաստումը ստանում է ծննդատանը՝ ծնվելուց հետո 24 ժամվա ընթացքում: Առաջին պատվաստումն արվում է հեպատիտ B-ի կամ, ինչպես ժողովուրդն է ասում, դեղնախտի դեմ: 48 ժամվա ընթացքում ծննդատանը երեխաները պատվաստվում են նաեւ տուբերկուլյոզի դեմ:

ԱՆ պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության գլխավոր մասնագետ **Գայանե Սահակյանն** ասում է, որ ծննդատնից դուրս գալուց հետո երեխաները նախատեսված պատվաստումները ստանում են արդեն պոլիկլինիկաներում, որտեղ 6-շաբաթական հասակում պատվաստվում են հնգավալենս վակցինայով՝ դիֆտերիայի, փայտացման, կապույտ հազի, հեպատիտ B-ի ու հեմոֆիլուս ինֆլուենզա B տիպի հիվանդության դեմ: Այս 5 հիվանդությունների դեմ պատվաստումն արվում է մի ներարկումով ու նույն վակցինայով, զուգահեռ պոլիոմելիտի դեմ պատվաստանյութից էլ 2 կաթիլ կաթեցվում է երեխայի բերանի մեջ:

Մինչ անդրադառնալը, թե ծնողների ու բուժաշխատողների շրջանում հնգավալենս պատվաստանյութն ինչ անհանգստություն է առաջ բերել, նշենք, որ մինչեւ 6 տարեկան երեխաները տարբեր հիվանդությունների դեմ պարբերաբար պատվաստվում են, օրինակ՝ 12 ամսականում պատվաստվում են կարմրուկի, կարմրախտի ու խոզուկի դեմ: Օրացուցային պլանի համաձայն՝ 6 տարեկանում երեխան ստանում է մանկական տարիքի համար նախատեսված վերջին պատվաստումները:

Գայանե Սահակյանն ընդգծում է, որ ապահովության համար երեխաները պետք է պատվաստվեն՝ անկախ փաստից՝ հանրապետությունում կա՞ տվյալ հիվանդությունը, թե ոչ. «1996 թվականից հետո Հայաստանում պոլիոմելիտի դեպքեր չեն գրանցվել, 2000-ից՝ դիֆտերիայի, իսկ 2007-ից նաեւ կարմրուկի ու կարմրախտի դեպքեր չենք ունեցել, սակայն հաշվի առնելով Հայաստանի հետ կապ ունեցող երկրների՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի համաճարակային վիճակը՝ մենք պատվաստումները չենք հանում մեր պլանային օրացույցից»: Ինչ վերաբերում է հակացուցումներին, զրուցակիցս նշում է՝ եթե երեխան տվյալ պահին առողջ է, ու բժիշկը նրա առողջական վիճակը բավարար է գնահատում, ապա նրան պատվաստել կարելի է, իսկ եթե այդ պահին երեխան ունի առողջական խնդիրներ, ապա պետք է սպասել ու պատվաստել նրան միայն ապաքինվելուց հետո: Իսկ եթե երեխան դիաթեզ ունի, ապա սրացման շրջանում նրան պատվաստել չի կարելի: «Սակայն սրացումն անցնելուց հետո ծնողները դիաթեզ ունեցող երեխաներին անպայման պետք է տանեն պատվաստման: Դիաթեզ կամ ալերգիա ունեցող երեխաներին պատվաստվել ավելի քան կարեւոր է, քանի որ ալերգիան ու դիաթեզն անընդհատ կրկնվելով՝ թուլացնում են երեխայի իմունիտետը», ասում է Գայանե Սահակյանը եւ հավելում՝ պատվաստումից հետո օրգանիզմի ջերմության բարձրանալը բնական երեւույթ է. «Նույնիսկ մինչեւ 40 աստիճան հասնելու դեպքում խուճապի մեջ ընկնել պետք չէ, քանի որ դա կախված է օրգանիզմի առանձնահատկությունից: Բարձր ջերմության դեպքում երեխային պարզապես կարող են տալ ջերմիջեցնող դեղորայք, որը կկարգավորի նրա վիճակը»: Բայց եթե երեխան ջերմություն ունի պատվաստվելու պահին, ապա մեզանում դա համարում են հակացուցում, ու այդ պահին երեխային չեն պատվաստում: Գայանե Սահակյանը նաեւ տեղեկացնում է, որ երեխաների մեջ պատվաստումներից հետո առաջացած տեղային ռեակցիաներից դարձյալ պետք չէ վախենալ. «Պատվաստված տեղի փոքր-ինչ ուռելն ու կարմրելը եւս սպասվող ու նորմալ ռեակցիա է»:

### Պատվաստումներից հրաժարվողների թիվն ավելացել է

Կանխարգելիչ պատվաստումներն, իհարկե, անգնահատելի նշանակություն ունեն թե՛ մեծերի, թե՛ փոքրերի համար: Պատվաստումների շնորհիվ Հայաստանում վերացել է նաեւ բնական ծաղիկ հիվանդությունը, եւ 1970-ականներից բնական ծաղիկի դեմ պատվաստումներն օրացուցային պլանում այլեւս չեն ընդգրկվում:

Չնայած իրենց օգտավետ կողմերին, այնուամենայնիվ պատվաստանյութերը «հալած յուղ չեն», ու որքան էլ ցավալի է, երեխաների մեջ երբեմն լինում են հետպատվաստումային ծանր ռեակցիաներ, որոնց մասին լուրերն ու խոսակցությունները տեղիք են տալիս խուսափելու պատվաստումներից: Թեեւ Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության մասնագետներն ու պոլիկլինիկաների բուժաշխատողները զգուշացնում են, որ բոլոր պատվաստումները հարկավոր է ժամանակին անել, այնուամենայնիվ շատ ծնողներ հրաժարվում են որոշ պատվաստումներից, երբեմն նաեւ հրաժարվում են պոլիկլինիկաների անվճար ծառայությունից ու գերադասում մասնավոր կլինիկաների վճարովի պատվաստումները: Հիշեցնենք, որ պոլիկլինիկաներում պատվաստումներն արվում են անվճար:

8-րդ պոլիկլինիկայի մանկաբույժ **Սոֆիա Բաբայանն** ասում է, որ ծնողները հիմնականում հրաժարվում են հնգավալենս վակցինայով պատվաստումից, որը երեխան պետք է ստանա 6-շաբաթական հասակում: «Ծնողները կարդում են ինտերնետում տեղադրված թյուր ինֆորմացիան, լսում են տարբեր բժիշկների կարծիքներն ու հրաժարվում հնգավալենս վակցինայից: Ի դեպ, բժիշկները հնգավալենս պատվաստանյութի վերաբերյալ իրարամերժ կարծիքներ ունեն. կան բժիշկներ, որ կողմ են դրան, եւ կան, որ դեմ են», ասում է մանկաբույժ Բաբայանը եւ հավելում, որ հրաժարվելուց հետո որոշ ծնողներ երեխաներին տանում են մասնավոր բուժհիմնարկներ, որտեղ հնգավալենս վակցինայի փոխարեն պատվաստում են եռավալենս վակցինայով, այսինքն՝ միայն դիֆտերիայի, կապույտ հազի ու փայտացման դեմ:

Նույն պոլիկլինիկայի մանկության գծով փոխտնօրեն **Ռուզան Երիցյանն** էլ նշում է. «Մեր պոլիկլինիկան աշխատում է ոչ թե ծնողների թելադրանքով, այլ առողջապահության նախարարի հրամանով ու պատվաստումների ազգային օրացույցով: Մենք իրավունք չունենք մի վակցինայի փոխարեն պատվաստելու այլ վակցինայով, ինչ է՝ ծնողն այդպես է պահանջում: Կան ծնողներ, որոնք չունենալով բժշկական գիտելիքներ, որոշում են, թե որ տարիքում ու ինչ վակցինայով պատվաստենք իրենց երեխային: Ծնողների նման պահանջն իհարկե մերժում ենք»: Հնգավալենս վակցինայով պատվաստումից հրաժարվող ծնողների թիվը, ըստ տիկին Երիցյանի, ավելացել է. «Իսկ հրաժարվող ծնողների մեծ մասը բուժաշխատողներ են»: Բնականաբար, պոլիկլինիկաների բուժաշխատողները չեն կարող պարտադրել ծնողներին, որպեսզի վերջիններս չհրաժարվեն հնգավալենս պատվաստանյութից: «Սակայն ծնողներին բուժաշխատողներս բացատրում ենք՝ եթե հանրապետությունում լինի համաճարակ, ապա երեխան կարող է հիվանդանալ, եւ անդառնալի կորուստներ կլինեն», ասում է Սոֆիա Բաբայանը:

8-րդ պոլիկլինիկայում հանդիպեցի նաեւ մանկաբույժ **Շողիկ Հովհաննիսյանին**: Նրա խոսքով՝ պատվաստումներից հրաժարվող ծնողների 90 տոկոսի հետեւում կանգնած են բժիշկներ, բայց՝ ոչ մանկաբույժներ. «Հենց այդ բժիշկների կողմից կանխարգելիչ պատվաստումների դեմ քարոզչություն է տարվում»: Մանկաբույժի 40 տարվա փորձ ունեցող Շողիկ Հովհաննիսյանը հավելում է, որ համաշխարհային բժշկության մեջ պատվաստանյութերին կապված հետեւյալ խնդիրն է առաջ եկել. «Մտավախություն կա, թե պատվաստանյութը կարող է աուտիզմ առաջացնել, եւ հիմա աուտիզմով հիվանդների թվի ավելանալը, բացի ուրիշ գործոններից, կապում են նաեւ կանխարգելիչ պատվաստումներին»:

Պոլիկլինիկայի բուժաշխատողները դժգոհում են, որ ծնողները պատվաստումների ժամանակացույցին չեն հետեւում, եւ երեխաներին կա՛մ չեն տանում պատվաստման, կա՛մ տանում են ուշացումներով, նույնիսկ բուժքույրերի հիշեցումներից ու զգուշացումներից հետո: «Մեզ մեղադրում են, որ կանխարգելիչ պատվաստումները ժամանակին չենք կատարում, իսկ երեխաների ընդգրկվածությունն էլ չի հասնում սահմանված նորմային, սակայն դրանում մեղավորը մեր բժիշկներն ու բուժքույրերը չեն, այլ՝ ծնողները», նշեց փոխտնօրենը:

Պոլիկլինիկայի բուժաշխատողներն անդրադարձան նաեւ պատվաստանյութերի վաղեմության ժամկետի շուրջը ծագած հարցերին: Ծնողներն անհանգստանում են, որ պոլիկլինիկաներում պահվող պատվաստանյութերը ժամկետանց են: Զրուցակիցներս վստահեցնում են, որ պատվաստանյութերը պահվում են պատշաճ պայմաններում, իսկ դրանց հին ու ժամկետանց լինելը բացառվում է:

Այնուամենայնիվ, քաղաքացիները պահանջում են, որ պատվաստանյութի սրվակը բաց անեն իրենց աչքի առաջ, այնինչ կան պատվաստանյութեր, որոնք նախատեսված չեն միայն մի երեխայի համար, հետեւաբար բացելուց հետո դրանք մի քանի օր պահվում են հատուկ պայմաններում, այլապես բոլոր երեխաներին չեն բավականացնի: Սակայն այդ հատուկ պայմանները ծնողներին վստահություն չեն ներշնչում: Զրուցակիցս, որը չուզեց իր անվան հրապարակումը, պատմում է, որ մի մանկաբույժի խորհրդով պատվաստանյութը գնել է դեղատնից. «Անձամբ գնեցի, քանի որ պոլիկլինիկայում ամեն երեխայի համար նոր սրվակ բացելուց հրաժարվում են: Պատվաստանյութը գնեցի թոռնիկիս համար, ու դիմեցի մասնավոր հիվանդանոց, որտեղ իմ գնած վակցինայով պատվաստեցին երեխային»: Զրուցակիցս հավելում է, որ հնգավալենս վակցինայից ինքը հրաժարվել է, փոխարենը գնել է եռավալենս վակցինա, որով երեխային պատվաստել են կարմրուկի, կարմրախտի ու խոզուկի դեմ: Նման տարբերակի շատերն են դիմում, բայց սա լավագույն լուծումը չէ, որովհետեւ դեղատներին էլ լիարժեք վստահել չենք կարող: Դժբախտաբար, անվստահության այս մթնոլորտում առաջինը տուժում են երեխաները: Բուժաշխատողների ու հիվանդանոցների հանդեպ անվստահությունը, պատվաստումների վերաբերյալ իրարամերժ խոսակցություններն ու ասեկոսեները պատվաստումներից խուսափելու տեղիք են տալիս: Իսկ եթե երեխան չի պատվաստվում, բնականաբար, հիվանդություններից պաշտպանված չէ: Սակայն պատվաստվելուց հետո էլ հազարից մի երեխայի դեպքում ծանր հետեւանքներ ու ռեակցիաներ կլինեն:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

***Պատվաստումների թեմային «Ազգը» կրկին կանդրադառնա առաջիկա համարներից մեկում:***

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# Նիդեռլանդներում է Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը

**Նիդեռլանդների Թագավորությունում իր այցի շրջանակներում ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը մի շարք հանդիպումներ է ունեցել հոլանդացի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:**

**Անվտանգության եւ արդարադատության հարցերով պետքարտուղար Ֆրեդ Թիվենի հետ հանդիպման ժամանակ կողմերը կարեւորել են հայ-հոլանդական հարաբերությունների խորացումը անվտանգության, արդարադատության եւ իրավապահ մարմինների համագործակցության ոլորտներում: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մեր երկրում քրեակատարողական համակարգում, ոստիկանության եւ դատաիրավական ոլորտներում իրականացվող բարեփոխումներին հոլանդական կողմի աջակցության մասին: Հանդիպման ընթացքում արձանագրվել է, որ հոլանդական պատվիրակության սեպտեմբերյան այցի ընթացքում կմշակվեն աջակցության, կարիքների գնահատման եւ փոխգործակցության մեխանիզմների հետ կապված ընթացակարգային խնդիրները:**

**Հաագայի Ազգային անվտանգության եւ ռազմավարական հետազոտությունների կենտրոնում հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանում անվտանգությանն առնչվող մարտահրավերների եւ ռիսկերի վերլուծության եւ գնահատման ժամանակակից համակարգ ներդնելու մասին: Կենտրոնի ղեկավար Ռոբ դե Վիկը նշել է, որ իրենց աջակցությամբ այդպիսի համակարգ է ներդրվել Ուկրաինայում, եւ կողմերը պայմանավորվել են համատեղ ջանքերով համագործակցություն սկսել Հայաստանում՝ նմանատիպ ժամանակակից եվրոպական համակարգի ներդրման ուղղությամբ, ինչը Եվրոպական միության առանցքային հարցադրումներից մեկն է, որը ներկայացվում է թե՛ Հայաստանին, թե՛ Արեւելյան գործընկերության մյուս երկրներին: Նիդեռլանդների ազգային անվտանգության հարցերով խորհրդական Կառլ վան Ուֆորդի հետ քննարկվել են անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում հայ-հոլանդական պարբերական կոնսուլտացիաների անցկացման խնդիրները, եւ պայմանավորվածություն է ձեռք բերվել այս ոլորտներում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերով պարբերական խորհրդատվություններ անցկացնելու մասին: Խորհրդականի խնդրանքով Արթուր Բաղդասարյանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող հայկական կողմի տեսակետները՝ նշելով որ դրանք համահունչ են միջազգային հանրության դիրքորոշումներին, եւ որ թուրք-ադրբեջանական կողմերի կառուցողական դիրքորոշումների բացակայությունը խոչընդոտում է առաջընթացին: Կողմերը կարեւորել են Հարավային Կովկասում փոխգործակցության եւ կայունության ամրապնդումը եւ ԵՄ-ի հետ սերտ գործակցությամբ բարեփոխումների խորացման անհրաժեշտությունը:**

*ԱԱԽ մամուլի գրասենյակ*

# Պարզաբանում «Մի շենքի տանիքի ոդիսականը՝ 1 տարի անց» հոդվածի առնչությամբ

**Հարգելի խմբագրություն,**

**Ձեր թերթի հունիսի 17ի համարում «Մի շենքի տանիքի ոդիսականը՝ 1 տարի անց» հոդվածի առնչությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված շենքի կառուցվածքները, տարածքներն ու սարքավորումները համարվում են շինության սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, որի սպասարկումը, պահպանումը ու վերանորոգումն իրականացվում են սեփականատերերի միջոցների հաշվին:**

**Երեւանի քաղաքապետարանը շենքերի կառավարման մարմիններին եւ սեփականատերերին որոշակի աջակցություն է ցուցաբերում, որի շրջանակներում էլ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Սեբաստիա-2» համատիրությանը 2010թ. ընթացքում տրամադրել է 60 հատ ազբոշիֆեր եւ 10 հատ թիթեղ: Դրանք, ըստ անհրաժեշտության, օգտագործվել են նշված համատիրության կազմում գտնվող շենքերի թեք լանջավոր տանիքների մասնակի վերանորոգումների համար: Առկա են շենքերի բնակիչների կողմից հաստատված գրությունները, այդ թվում նաեւ Սեբաստիա 24/1 շենքի բնակիչներինը:**

**Նշենք, 2010թ. ընթացքում Սեբաստիա 24/1 շենքից պարտադիր նորմերի կատարման համար հաշվարկային գումարը կազմել է 726.6 հազ. դրամ, որի դիմաց շենքի բնակիչներից գանձվել է 229.0 հազ. դրամ: Հավաքագրված 229.0 հազ. դրամից 163.0 հազարը ծախսվել է պարտադիր նորմերի ապահովմանն ուղղված աշխատանքների եւ այլ վերանորոգումների, մնացածը՝ կառավարման եւ հարկային պարտավորությունների համար:**

**Նշենք նաեւ, որ 01.01.2011 թվականից մինչ օրս նույն շենքի բնակիչներից գանձվել է 82.0 հազ. դրամ:**

**Ինչ վերաբերում է հաշվետվությանը, ապա համատիրությունը պարտավոր է մինչեւ յուրաքանչյուր ամսվա 15-ը սեփականատերերին հաշվետվություն ներկայացնել նախորդ ամսվա կատարած աշխատանքների եւ ծախսված գումարների վերաբերյալ: Սեփականատիրոջ պահանջով հաշվետվությունը պետք է տրամադրվի նաեւ իրեն:**

***Հեղինակի կողմից*** *- Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից ստացված պարզաբանումը մեր հրապարակման կապակցությամբ թեեւ չէր անդրադառնում հիմնական՝ հիշյալ շենքի տանիքի նորոգված չլինելու փաստին, այդուհանդերձ, հույս է ներշնչում, որ գոնե այս անգամ հարցը կկարգավորվի, եւ եւս մեկ տարի անց դրա մասին խոսելու կարիք չի լինի:*

**Ա. Ս.**

ԱԶԳ

# Միջազգային

# Գրաքննության է ենթարկվել Աթաթուրքի 80 տարի քողարկված նամակը

## *Դրա ամբողջական տեքստը հրապարակվել է միայն վերջերս*

Օրերս Թուրքիայում լույս է տեսել Աթիլլա Օրալի «Աթաթուրքի գրաքննության ենթարկված նամակը» գիրքը: 80 տարի քողարկված 21-էջանոց այս նամակը ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը հասցեագրել է Թուրքական պատմական ընկերությանը:

Նախքան նամակին անդրադառնալը նշենք, որ Թուրքական պատմական ընկերությունը Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծվել է 1932-ին: Հիմնադիր կազմի անդամները Աթաթուրքի հոգեդուստր Աֆեթ Ինանի գլխավորությամբ ձեռնամուխ են եղել կամայականորեն թուրքացնել ինչպես Փոքր, այնպես էլ Առաջավոր Ասիայի այնպիսի հնագույն ժողովուրդների, ինչպիսիք են խեթերը, շումերները, աքայացիները, աքքադացիները, խուրրիները: «Թուրքացումից» չեն խուսափել նաեւ արիացիները, արիական լեզուն եւ մշակույթը:

Այս մոտեցումը պատահական չէր, այլ պայմանավորված էր ոչ թուրք ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում թուրքական ազգային պետություն ստեղծելու եւ բազմազգ երկրում նորաստեղծ պետության միասնականությունն ապահովելու քաղաքական առաջադրանքով: Այլ կերպ, թուրք գիտնականների առջեւ խնդիր էր դրվել գիտականորեն հիմնավորելու թուրքերի իրավունքները Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ, մասնավորապես ապացուցելու, որ թուրքերն ունեն տեղական ծագում, իսկ Թուրքիայի բազմազգ բնակչությունը՝ քրդերը, լազերը, արաբները եւ այլն, ռասայական միասնություն:

Թուրքական պետության միասնականությունն ապահովելու համար թուրքերի տեղական ծագումն ապացուցելու խնդիրը թուրք գիտնականների առջեւ Քեմալ Աթաթուրքն էր դրել: Սակայն վերջիններիս անհեթեթության հասնող կեղծարարությամբ պայմանավորված նացիոնալ-շովինիստական ագրեսիվ տեսությունը խիստ քննադատության ենթարկվեց Արեւմուտքի գիտական շրջանակներում: 1938-ին Աթաթուրքի մահից հետո Թուրքիայում հետզհետե ասպարեզ իջան պանթյուրքիստները, որոնք էլ սկսեցին տիրել նախաձեռնությանը Թուրքական պատմական ընկերությունում:

Եթե նացիոնալ-շովինիստ պատմաբանները մարդկային մշակութային ամեն մի դրսեւորման մեջ տեսնում էին «թուրքական ոգի», ապա պանթյուրքիստները թյուրքալեզու բոլոր ժողովուրդներին հայտարարեցին միասնական մեկ ազգ եւ ազգի վաղեմի օրրանը համարեցին այն ամբողջ տարածքը, որը բնակեցված է թուրքերի հետ էթնիկ, պատմական առնչություն ունեցող ժողովուրդներով:

Արեւմտյան գիտնականների քննադատությանը չդիմացավ պանթյուրքիստ պատմաբանների ոչ պակաս հակագիտական տեսությունը: Սակայն ժամանակի ընթացքում Արեւմուտքի եւ Թուրքիայի միջեւ հաստատվեցին սերտ կապեր: Այս պայմաններում աստիճանաբար նվազեց նշված տեսությունների քաղաքական պահանջարկը: Այդ ընթացքում վերստին միջազգային ասպարեզում հայտնվեց Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Դա ստիպեց, որ Թուրքական պատմական ընկերությունը վերագնահատի իրավիճակը: Հայոց ցեղասպանությունը դարձավ ընկերության զբաղմունքի հիմնական առարկան, իսկ ժխտողականության հիմնավորումը՝ գլխավոր առաջադրանքը վերջին տասնամյակներում, ինչի մասին, ի դեպ, վկայում են առաջադեմ որոշ թուրք գիտնականներ:

Գալով 16-17 օգոստոսի, 1931 թվագիր նամակին, ապա դրա ամբողջ տեքստը առաջին անգամ հրապարակվել է Օրալի գրքում, որի առնչությամբ հեղինակը, ըստ «Հաբերթուրքի» հունիսի 19-ի համարի, ասում է. «Թուրքական պատմական ընկերությունը ընդամենը մի քանի տող է հրապարակել նամակից: Այդ տողերի մեջ ուրույն տեղն ունի Աթաթուրքի հանրահայտ արտահայտությունը. «Պատմություն գրելը այնքան է կարեւոր, որքան պատմություն կերտելը: Եթե գրողը հավատարիմ չմնա կերտողին, ապա ճշմարտությունը, որն անփոփոխ է միշտ, մարդկությանը շփոթեցնող բնույթ կստանա: Դուք համամի՞տ եք ինձ հետ»: Նույնիսկ գրաքննության է ենթարկվել այս արտահայտությունը: «Դուք համամի՞տ եք ինձ հետ» նախադասությունը կրճատելուց հետո միայն Աթաթուրքի խոսքը արձանագրվել էր Թուրքական պատմական ընկերության կենտրոնական վարչության շենքի մարմարե ցուցանակի վրա»:

Այնուհետեւ Օրալը գրքից արած մեջբերումներով շարունակում է. «Խնդրո առարկան դասագրքերն էին: Աթաթուրքը միջնակարգ դպրոցների համար պատմության դասագիրք պատրաստելու հանձնարարական է տալիս Թուրքական պատմական ընկերությանը: Ընկերությունը ձեռնամուխ է լինում դրան: Դասագրքի «Իսլամի պատմություն» եւ «Թուրքերի տեղը իսլամում» բաժինները գրի է առնում Եգիպտոսի Ալ Ազհար հոգեւոր համալսարանի շրջանավարտ Զաքիր Կադիրին: Սակայն Աթաթուրքը, պատճառաբանելով, թե այս բաժինները գրված են արաբական ազգայնականության ոգով, առարկում է: Նա կարգադրում է խմբագրական փոփոխություններ կատարել տեքստում: Սակայն փոփոխությունները նրան չեն բավարարում եւ նա մոլեգնում է: Ապա եւ ասում. «Ի՞նչ նպատակ է հետապնդում արաբական բանակին գերի ընկած մարդկանցից սերունդների (ղուլամ) դասակարգ ստեղծելու եւ այս սերունդների թուրքական ծագումն ընդգծելու նկրտումները, առանց ճշմարտությունը պարզելու չի կարելի այս բաժիններն ընդգրկել պատմության դասագրքերում: Պարոն Թեւֆիք (Թուրքական պատմական ընկերության նախագահ) Զաքիր Կադիրիի տխմար ծանոթագրությունները սրբագրելիս հաշվի առեք այս հանգամանքը: Ավելի լավ է առհասարակ գիրք չգրել, քան գրելու համար զղջալ: Գիտության ոլորտում կասկածամիտ լինելը Եգիպտոսի Ալ Ազհար մզկիթում կրթվածների գրածին հավատալուց անհամեմատ լավ է»: Ծագումով Զաքիր Կադիրի Ուգանը Թուրքիստանից է, ծնվել է 1878-ին, գրի առած բաժնում նա տուրք է տվել Ալ Ազհար մադրասայի շեյխերի տեսակետներին:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Բեն Ալին եւ նրա կինը դատապարտվեցին 35 տարվա բանտարկության

Թունիսում հեռակա դատել են երկրի նախկին նախագահ Բեն Ալիին եւ նրա կնոջը՝ Լեյլա Տրաբելսիին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ երկուսն էլ մեղավոր են ճանաչվել պետական ունեցվածքի հափշտակության մեջ եւ դատապարտվել 35 տարվա բանտարկության:

Դատավորը նաեւ վճռել է, որ դատապարտյալները պետք է վճարեն տուգանքներ. Բեն Ալին՝ 50 մլն թունիսյան դինար (25 մլն եվրո), Տրաբելսին՝ 41 մլն դինար:

Հափշտակումների գործը քննել են մեկ օրում: Ամբաստանյալների շահերը ներկայացնում էին դատարանի նշանակած պետական փաստաբանները:

Հունիսի 30-ին քննվելու է Բեն Ալիի հետ կապված եւս մեկ գործ: Խոսքը թմրադեղերի եւ զենքի անօրինական շրջանառության մասին է:



«Ալ Ջազիրա» հեռուստաալիքին տված հարցազրույցում Բեն Ալին հայտարարել է, թե ինքը հրաժարական չի տվել եւ Թունիսի նախագահի պաշտոնը չի թողել: Մինչդեռ հայտնի է, որ 2011-ի հունվարին նա կնոջ եւ զավակների հետ Սաուդյան Արաբիա փախավ Թունիսում տեղի ունեցած բողոքի բազմամարդ ելույթներից եւ պետական հեղաշրջումից հետո: Ավելի ուշ Բեն Ալիին ներկայացվեցին մի շարք մեղադրանքներ: Մասնավորապես պնդվում է, որ նրա նստավայրում հայտնաբերվել են 27 մլն դոլար ընդհանուր արժողությամբ զենք, թմրադեղեր, արտարժույթ եւ զարդեղեն:

Բացի դրանից, Թունիսի նոր իշխանությունները մտադիր են Բեն Ալիին դատել ոստիկանության հետ բախումների ժամանակ տասնյակ ցուցարարների սպանության համար:

ԱՎԻԱՎԹԱՐ

# Մոսկվա-Պետրոզավոդսկ չվերթի օդանավն ընկել է խճուղու վրա



Մոսկվայից թռած «Տու-134» օդանավը երեկ վաղ առավոտյան Պետրոզավոդսկի օդանավակայանում վատ տեսանելիության պայմաններում վայրէջքի փորձ կատարելիս ընկել է մոտակա խճուղու վրա: Վթարի հավանական պատճառներից մեկը օդանավակայանի թռիչքուղու ազդանշանային լույսերի կարճատեւ անջատումն է, քանի որ իջնող օդանավը դիպել էր էլեկտրահաղորդման գծերին: Այդ մասին հայտարարել է Կարելիայի բնակչության կենսապահովման եւ անվտանգության կոմիտեի նախագահ Նիկոլայ Ֆեդոտովը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Ըստ Ֆեդոտովի, 300 մետր տեսանելիության պայմաններում վայրէջքի փորձ կատարելիս օդանավը թռիչքուղուց շեղվել է 150-200 մետր: Երկրորդ փորձ կատարելու դիսպետչերի հրահանգից հետո անձնակազմը փորձել է շրջում կատարել 110 մետր բարձրության վրա, բայց մանեւրելիս օդանավը դիպել է խճուղու էլեկտրահաղորդման գծին: Դրա հետեւանքով թռիչքուղու լույսերը 5 վայրկյանով մարել են: Մինչ վթարային լուսավորության միանալը օդանավն արդեն դիպել էր ծառերի կատարներին եւ ընկել խճուղու վրա:

Ինտերֆաքսին տված հարցազրույցում համանման վարկած է շարադրել նաեւ օդանավակայանի տնօրեն Ալեքսեյ Կուզմիցկին: Նրա խոսքերով, հաղորդալարերը կտրվել են օդաչուի սխալի հետեւանքով:

Ի դեպ, էլեկտրասնուցման կարճատեւ ընդհատումը դեռ պաշտոնապես ընդունված չէ որպես աղետի պատճառ: Վատ տեսանելիության պայմաններում անձնակազմը ավտոխճուղին կարող էր շփոթած լինել թռիչքուղու հետ:

«Ռուսէյր» ավիաընկերության օդանավում կար 52 մարդ, որոնցից 44-ը զոհվել են: 8 վիրավորների (մեկը երեխա է) վիճակը ծանր է: Հաղորդվում է, որ զոհված ուղեւորներից մեկը Շվեդիայի քաղաքացի էր, մեկը՝ Հոլանդիայի, երկուսը՝ Ուկրաինայի:

Երեկ արդեն հայտնաբերվել են վթարված «Տու-134»-ի «սեւ արկղերը», որոնք լավ վիճակում են:

# Իրաքը փնտրում է ամերիկյան հիմնադրամից կորած 18,7 մլրդ դոլարը

Իրաքի խորհրդարանը ՄԱԿ-ի տեղական ներկայացուցչությանը խնդրել է օգնել գտնելու ամերիկյան հիմնադրամում պահվող եւ Իրաքի պատերազմի ժամանակ կորած 18,7 մլրդ դոլարը: Այդ մասին հաղորդում է «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը՝ վկայակոչելով Իրաքի խորհրդարանի նախագահ Օսամա ալ Նուջայֆիին:

Խոսքն Իրաքի վերականգնման հատուկ հիմնադրամի մասին է, որ հիմնվել էր այդ երկրի ԿԲ-ի եւ Նյու Յորքի դաշնային բանկի ջանքերով: Գումարը համալրվում էր իրաքյան նավթի վաճառքի, ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագրի շահույթի, ինչպես նաեւ Սադդամ Հուսեյնի վարչակարգից առգրավված կայքի եւ միջոցների հաշվին:

Հիմնադրամի փողերն օգտագործվում էին իրաքցի պետծառայողներին աշխատավարձ վճարելիս, ինչպես նաեւ երկրի վերականգնման ծրագրի ֆինանսավորման շրջանակներում: Վճարումները կատարվում էին 2003-ից ամերիկացի զինվորականներին փոխանցված կանխիկ դոլարներով:

Փողերի կորուստը հայտնի է վաղուց, բայց աուդիտորական ստուգումները գոհացուցիչ արդյունք չեն տվել: Այսպես, հունիսի կեսերին Իրաքի վերականգնման գործերի գծով հատուկ գլխավոր տեսուչ Ստյուարտ Բոուենը խոստովանեց, որ հիմնադրամից կորել է ընդամենը 6,6 մլրդ դոլար:

Օսամա ալ Նուջայֆին մտադիր է կորած միջոցները Իրաքին վերադարձնելու հարցը քննարկել մոտ ժամանակներս ԱՄՆ կատարելիք այցի ժամանակ: Իրաքի իշխանությունները սպառնում են փողերի վերջնական կորստի դեպքում դատի տալ ԱՄՆ-ին:

Սակայն, Ռոյթեր գործակալության տվյալներով, ՄԱԿ-ի ԱԽ բանաձեւերից մեկը Բաղդադին թույլ չի տալիս դատի տալ Վաշինգտոնին: Այդ պատճառով իրաքցի պատգամավորները դիմել են ՄԱԿ-ին, հուսալով, թե միջազգային մակարդակով հնարավոր կլինի լուծել փողերի կորստի հարցը:

# Նոր համաներում Սիրիայում

Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հունիսի 21-ին հայտարարել է համաներում, որը վերաբերում է մինչեւ 2011 թ. հունիսի 20-ը կատարված բոլոր հանցագործություններին: Այդ մասին հաղորդում է սիրիական SANA լրատվական գործակալությունը:

Նախօրեին Ասադը իր ելույթում ներկայացրել էր երկիրը ճգնաժամից դուրս բերելու ծրագիր: Մասնավորապես պետք է ստեղծվի հատուկ խորհուրդ, որը կզբաղվի օրենսդրության վերանայմամբ: Նախագահը նաեւ խոստացել է բարեփոխել ընտրական համակարգը, թուլացնել գրաքննությունը եւ արմատախիլ անել կաշառակերությունը: Նա ասել էր, որ 64 հազար մարդ ներկայումս հետապնդման մեջ է տարբեր մեղադրանքով: Նրանց մեծ մասի համար Ասադը խոստացել էր համաներում:

Ասադը բարեփոխումների կիրարկման հիմնական պայման է համարում երկրում անկարգությունների դադարեցումը: Ավելի վաղ նա քանիցս հայտարարել էր, որ Սիրիայում բռնությունների համար մեղավոր են «քայքայիչ տարրերը», այդ թվում՝ օտարամուտ:

Իրավիճակի կայունացման նպատակով Բաշար Ասադը քանիցս զիջումներ է արել ընդդիմությանը: Այսպես, բողոքի ելույթներն սկսվելուց հետո նա խոստացավ անցկացնել բարեփոխումներ, փոխեց կառավարության կազմը, վերացրեց կես դար գործած արտակարգ դրությունը: Մայիսի 31-ին նա հայտարարեց բոլոր քաղբանտարկյալների, այդ թվում՝ «Մուսուլման եղբայրներ» արգելված շարժման անդամների համաներում:

## Մշակույթ

²м. Жк²Р²ОЪ²Ь ¶р²‚²р²Ь

# Մեծարվեց ամերիկահայ թատերագիր Հրանտ Մարգարյանը

Չնայած անտանելի տոգին, Ավ. Իսահակյանի անվ. գրադարանի հյուրընկալ հարկի տակ էին համախմբվել մտավորականներ, գրականագետներ, մանկավարժներ ու սփյուռքից ժամանած հյուրեր մասնակցելու ամերիկահայ թատերագիր, բեմադրիչ, բանաստեղծ, Համազգայինի Նյու Յորքի մասնաճյուղի նախկին նախագահ Հրանտ Մարգարյանի մեծարման երեկույթին: «Հրանտ Մարգարյանի ստեղծագործական ճամփան՝ գրականությունից մինչեւ մանկավարժություն, հասարակական գործունեությունից մինչեւ Նյու Յորք ծովածավալ քաղաքի հայության ամենօրյա հոգսեր, ճակատագիրն է այն հայի, որն ապրում է օտար աշխարհում, բայց Հայաստան երկրի զավակն է, զինվորն ու քաղաքացին...»: Ահա այսպես շարադրեց իր միտքը օրվա բանախոս, բանասիրական գիտությունների դոկտոր տկն. **Մարգարիտ Խաչատրյանը**: Նա մանրամասն վերլուծեց Հրանտ Մարգարյանի գրական ժառանգությունը, կարեւորելով դրանց դերն ու արժեքը: «Մարգարյան դրամատուրգը շատ ասելիք ունի սփյուռքի հայ հանդիսատեսին. ամեն հայ իր մեծ ու փոքր Ավարայրն ունի, եթե ուզում է հայ ապրել, ձգտում է հայ մնալ, երազում է զավակներին հայ մեծացնել...», ընդգծեց բանախոսը ու վերլուծաբար խոսեց Հրանտ Մարգարյանի «Վարդանանք» պիեսի մասին, որից մի հատված դիտելու հնարավորություն ունեցան ներկաները:

Բանախոսի խոսքը, ոսկեղենիկ հայերենով, ընդմիջվում էր ՀՀ վաստ. արտիստներ Ազատ Գասպարյանի, Սիլվա Յուզբաշյանի եւ ասմունքող Գայանե Սամվելյանի կատարումներով, որոնք վերցված էին Հրանտ Մարգարյանի «Քառաձայն պատարագ» եւ «Ենթա ես եմ գրքերից: Մարգարիտ Խաչատրյանը ամփոփելով «Գրողի դիմանկարի փորձ» խորագրով իր ելույթը՝ ասաց. «Հրանտ Մարգարյանի համար պատմության հին ու հինավուրց էջերի կողքին ամենից արժեքավորը Հայաստանի Հանրապետության գոյության փաստն է: Սա պատմական հայրենիքում երկու ուղեւորության ընթացքում միայն մեկ անգամ Հայ բառը տեսած հայի միավորման կոչն է հայության աշխարհասփյուռ բեկորներին»:

Այնուհետեւ Հրանտ Մարգարյանին եւ իր տիկնոջը Ժանետին մեծարեցին ու գնահատանքի խոսքեր հղեցին գրադարանի տնօրեն Համմիկ Կարապետյանը, գրող-հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանը, թատերագետ Վարսիկ Գրիգորյանը եւ ուրիշներ, բարձր գնահատելով նաեւ նրանց ազգասիրական ու բարեգործական բեղուն գործունեությունը ոչ միայն Հայաստանում, այլեւ Արցախում:



Քիմիական գիտությունների դոկտոր, բանաստեղծ, թատերագիր, բեմադրիչ **Հրանտ Մարգարյանը** շնորհակալություն հայտնեց ելույթ ունեցողներին եւ անմոռանալի երկու դրվագ պատմեց Արեւմտյան Հայաստան այցից: «Իմ կյանքը երեք հանգրվան է անցել, ասաց նա: Ամեն գիշեր մեր տան մեջ հավաքվում էին ու դողալով պատմում, թե ինչպես են փախել ու փրկվել: Ես գրքերով չեմ դաստիարակվել, այլ այդ ամենով՝ ինչ լսել եմ կենդանի վերապրողների շուրթերից, երբ հաստատվել էինք Բաղդադում»: Երիտասարդ տարիքում Մարգարյանը հրապուրվում է կինոյով եւ միակ կինոսրահից գնում է այն կտրատված ժապավենները, որոնք հետագայում իրար կպցնելով, դրացիների համար կինոցուցադրություններ է կազմակերպում: Պատմում է, որ 15 տարեկանում գրում է փոքրիկ պիես, իսկ հետո ուսումը շարունակում քիմիայի բնագավառում, ստանում մագիստրոս դոկտորի կոչում: 27 պիեսների, բանաստեղծությունների ժողովածուների հեղինակ Հրանտ Մարգարյանը մի քանի տասնյակ պիեսներ է բեմադրել տարբեր թատերախմբերում եւ նաեւ ղեկավարել է Նյու Յորքի Համազգայինի թատերախումբը: Նյու Յորքի նահանգային պետական ինստիտուտի կողմից պաշտոնապես նրան պատվիրվել է գրել պիես Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առիթով: «Լռություն՝ բոլորաձեւ ծիածանի մեջ» վերնագրով պիեսը մեծ հավանության է արժանացել եւ հաջորդ տարի կբեմադրվի Նյու Յորք քաղաքում, տեղեկացրեց պրն. Մարգարյանը «**Ազգի**» հետ զրույցում: Սակայն այսքանով չի սահմանափակվում տեր եւ տիկին Հրանտ եւ Ժանետ Մարգարյանների հայրենանվեր գործունեությունը: Նրանք չեն սիրում արած գործերի մասին խոսել, այլ նշում են՝ «պարտք ունենք մեր հայրենիքին ամենքս եւ այդ պարտքը պիտի կատարենք քանի կապրենք...»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Տիրամայր Հայաստան» երգչախումբը Փարիզի մէջ

*ղեկավարութեամբ Ռոպէրթ Մլքէեանի*

Տակաւին ուսանող՝ ներկայ գտնուած էի Վիեննայի Մխիթարեան միաբանութեան 150-ամեակին նուիրուած տօնակատարութեան, մասնակցելով նաեւ Այտընեանի Missa Solemnis հանդիսաւոր պատարագի երգեցողութեան:

Կը յիշեմ, երգչախումբի փորձի մը ժամանակ խմբավար վարդապետը սրահէն ներս մտնելով մեզ բոլորիս ներկայացուց երիտասարդ անձնաւորութիւն մը: Այդ երիտասարդը Յովհաննէս Չէքիճեանն էր, որ արդէն յաջորդ օրը կը մեկնէր Երեւան, անցնելով Մոսկուայէն, ստանձնելու համար Հայաստանի պետական երգչախումբի ղեկավարութիւնը: Սերտ եղան մեր կապերը սկսեալ նոյն երեկոյէն եւ մնացինք մինչեւ օրս մտերիմ բարեկամներ:



Տարիներ անց, Հայաստանի պետական երգչախումբի համերգային շրջագայութեան ընթացքին, ինչպէս որ այն ատեն կ'անուանէին «կասդրոլ», մաէսթրօ Չէքիճեան ելոյթ պիտի ունենար Չեխոսլովաքիայի մայրաքաղաք Փրակայի եւ ուրիշ քաղաքներու մէջ, ներկայացնելով Berlioz-ի «TE DEUM» հանրածանօթ հզօր երաժշտական ստեղծագործութիւնը: Ինչպէս միշտ, համաձայնեցանք իրարու հանդիպիլ վերոյիշեալ մայրաքաղաքին մէջ, շրջանցելու համար այդ ժամանակաշրջանի ճամբորդական քաշքշուքները:

Փրակայի մէջ, երջանկութիւնը ունեցայ մտերմանալու կիրթ, նուրբ, հիանալի մարդու մը՝ Արթուր Վերանեանին: Ան փոխ ղեկավարն էր Ակադեմական կապելլային եւ կարճ ժամանակամիջոցի մէջ վերապատրաստեց փոքր մանչերու երգչախումբը, որ մաս պիտի կազմէր TE DEUM-ի մեկնաբանութեանը: Հայաստան չունէր եւ չունի տակաւին զուտ փոքր մանչերէ կազմուած երգչախումբ մը, նման Վիեննայի եւ կամ Փարիզի «փայտէ խաչով» փոքրիկ երգիչներու հռչակաւոր համոյթներուն: Անոնք ունին «կոկորդային շեփորանման» եւ ինչպէս որ կ'ըսեն ընդհանրապէս «հրեշտակներու ձայներ»՝ յարիր բարոկ երաժշտական ոճին, առանց ձայնային թրթռացումներու, եւ որոնք կու տան ոչ միայն նոր երանգաւորումներ, այլեւ՝ արեւի լոյսի նման շլացուցիչ ջերմ ճառագայթումներ:

Այնուամենայնիւ, Երեւանի մէջ շնորհիւ Վերանեանի, այժմ Բոստոն, ծանօթացայ աղջիկներէ կազմուած իր «Սայաթ-Նովա» անմոռանալի երգչախումբին, ինչպէս նաեւ այլ երգչախումբերու:

Փարիզի հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցին լեփ-լեցուն էր, 30 ապրիլ 2011-ի երեկոյեան, ըմբոշխնելու համար «Տիրամայր Հայաստան» երգչախումբը, որ կազմուած էր Պոդոսեան կրթահամալիրի «Տիրամայր» ծնողազուրկ երախաներէ եւ համալրուած էր նաեւ այդ քաղաքի երաժշտական դպրոցներէ շնորհալի եւ օժտեալ աշակերտներով: Անոնք «կեղծ» եւ «ծպտեալ» չթուացին...

Յուզումնախառն զգացումներով կը յորդէր ներաշխարհս: Քարացած անտանելի ցաւ պատճառող մկանակծկումով, հակառակ արցունքներու զսպումի ամէն ճիգերուս, ինչպէս նաեւ ներկաներուն մեծամասնութեան, շնչահեղձ կ'ունկնդրէի մեկնաբանութիւնը այս փոքրիկներուն եւ կը զարմանայի, թէ ինչպէս կարելի եղած է, որ Դելլալեանի «լռութեան վայրկեան» այս Requiem Cantate-ի մեկնաբանութիւնը, նուիրուած Հայոց ցեղասպանութեան, հասցնել երաժշտական նման մակարդակի: Անոր մասին Վարդուհի Պալյեան Տիրամայր Հայաստանի կեդրոնէն ինծի կը գրէր համացանցով հետեւեալը Գիւմրիէն, որ կարդացած էր համերգի ընթացքին. «Այս անչափ յուզիչ ստեղծագործութեան մէջ, կը լսենք անապատից փախուստ տուածների ոտնաձայները, սարսափելի ճիչերը բոլոր նրանց, ովքեր ականատեսն են եղել անմեղ ժողովրդի դաժան մահուան: Նրանք ընկան լռութեան մէջ: Ստեղծագործութիւնն աւարտւում է վերածննդի յոյսով լի»:

Կրկին անզուգելի յուզումի փշաքաղող սարսուռներ կը թափանցեն ամբողջ էութեանս ընդմէջէն: Հիացական են իմ տպաւորութիւնները այս երգչախումբին ծայրագոյն անիմանալի հնարաւորութիւններուն նկատմամբ: Ղեկավար Ռոպէր Մլքէեան կը յաջողի ընել բան մը, որ հրաշքի համազօր է: Խօսիլ, քննարկել այս երգեցիկ խումբին «թեքնիքական» շշմեցուցիչ կարողութիւններուն, անոնց զուլալ ձայներուն, միաձոյլ հնչողականութեան մասին, կը խորհիմ թէ այլեւս աւելորդ է: Հոս չկայ միջակութիւն, որովհետեւ երաժշտական արուեստը չի հանդուրժեր միջակութեան:

Սակայն, կը փափաքիմ անդրադառնալ, խիստ մելամաղձոտ, թախծոտ սքանչելի ձայնով մեկնաբանութեանը Աննա Ավդալեանի, որ երգեց անմահ Կոմիտասի «Կանչէ կռունկ»ը: Բացառիկ էին նաեւ միւս մենակատարներն ու խումբին երգիչները:

Անկասկած մեծ է Մլքէեանի դերն ու ցուցումները, որոնք հիանալիօրէն կը փոխանցուին եւ կը թափանցեն, կը ներշնչեն մենակատարներու ներաշխարհը:

Հպարտութեամբ կրնամ ըսել, որ Ռոպէր Մլքէեան Հայաստանի ժամանակակից երգչախմբային երաժշտութեան լաւագոյն խմբավարներէն մէկն է: Ան նախ եւ առաջ չափազանց համեստ, ազնիւ ու բարի անձնաւորութիւն մըն է, այն աստիճան, որ զինք չենք տեսներ բեմահարթակին վրայ՝ երկի մը մեկնաբանութեան վերջաւորութեան, այլ՝ միայն երգեցիկ խումբը: Ծիծաղը միշտ իր շրթներուն վրայ է: Իր դիւրահաղորդ ձեռքերով, որոնցմէ կարծես կը բխին իր սրտի յուզումները եւ զգացումները, կարողութիւնը ունի հասնելու երգչախումբի փոքրիկ կատարողներուն հոգիին ու սրտին մինչեւ խորերը:

Մլքէեանի ղեկավարութեան ոճը կրնամ ըսել՝ դասական է, զուրկ՝ ձեւականութիւններէ, զուսպ եւ յստակ շարժումներով: Նոյնիսկ ան իր մատներով կը յաջողի ստանալ իր փափաքած զօրութիւններն ու ստեղծագործութեան նրբութիւնները:

Ռոպէր Մլքէեան իր պատկառելի տեսքով եւ կեցուածքով արժանի է կոչուելու հայ երաժշտութեան ամուր սիւներէն մէկը: Եւ թող այդ սիւնը յարատեւէ եւ կարողանայ իր հաստատուն ուսերուն վրայ պահել հայ երաժշտութեան փառքն ու պատիւը ամէնուրեք:

ԲԺ. ԼԵՎՈՆ ՄՈՄՃԵԱՆ
Փարիզ

# Վահան Թոփչյանի «Կեսգիշերային զբոսանք քաղաքում» նկարաշարի ցուցադրություն

Գյումրեցի արվեստագետ Վահան Թոփչյանը կյանքի հանդեպ մոգական աշխարհայացք ունի: Նրա նկարների շնորհիվ տեղափոխվում ենք ժամանակի եւ տարածության այլօրինակ աշխարհ, միեւնույն ժամանակ ոգեշնչվում՝ մի նոր ու կախարդիչ լույսով դիտելու երկնային ժամանակակից օբյեկտներն ու իրադարձությունները:

Ինչպե՞ս կոչենք այդ պատկերները՝ մոգական ռեալի՞զմ, պատրանքնե՞ր, թե՞ երազների պատկերներ: Վահանն այլեւս չի մանրամասնի: Բայց նրա գրավիչ, «դավադիր» ժպիտը, զուգորդված աչքերի փայլին, խոցող է, գրեթե հիպնոսացնող: Իր աշխատանքների մասին հեղինակի մեկնաբանությունները ճշմարիտ են միայն որոշակի ժամանակահատվածում: Ամեն անգամ նույն նկարի մասին նա կպատմի մեկ այլ պատմություն:

Սկսած 1978թ. Վահան Թոփչյանը մասնակցել է հանրապետական եւ միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների: Նրա ստեղծագործական ձեռագրի ինքնատիպ կնիքն են կրում տարաբնույթ գրքերն ու ամսագրերը, որոնց գեղարվեստական ձեւավորումները վկայում են գծի եւ գույնի ներհայեցողությամբ ապրող ու փիլիսոփայող արվեստագետի մասին:

2005թ. Վահան Թոփչյանը համագործակցում է «Գալերի 25»-ի հետ, որը հիմնադրվել է 1999թ. եւ գործում է Բեռլին Արտ Հոթելի տարածքում: Այստեղ սենյակներից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկ արվեստագետի գործեր, իսկ ցուցասրահներում տեղի են ունենում փոփոխվող ցուցադրություններ: «Գալերի 25»-ը մասնակցել է միջազգային արտ էքսպոների, կազմակերպել ցուցահանդեսներ Հայաստանում եւ արտասահմանյան մի շարք երկրներում, արվեստագետների համար՝ արտ ռեզիդենսի, ինչպես նաեւ հրատարակել է արվեստագետների պատկերագրքեր:

«Ապարեզ»
լրագրողական ակումբ

# Ռիմա եւ Ռուբինա Մինասեանների նկարների ցուցահանդէսը Թեհրանում

Թեհրանի հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան երէցների միութեան նախաձեռնութեամբ, յունիսի 7ից սկսած «Արարատ»ի Նոբահարի կենտրոնատեղիի «Կոմիտաս» սրահի նախասրահում կազմակերպուեց ժամանակակից նկարչութեան ցուցահանդէս, որտեղ մինչեւ յունիսի 10ը ցուցադրութեան դրուեցին վաստակաւոր նկարչուհի Ռիմա Մինասեանի աքրիլիք տեխնիկայի իւղանկարների եւ իր դստեր՝ Ռուբինա Մինասեանի ջրաներկ պաստառները:

Տկն. Ռիմա Մինասեանը (Թորոսեան) ծնուել է 1949 թուականին եւ պատանի տարիքից սկսել է զբաղուել գեղանկարչութեամբ: Տարիներ նկարչութիւն է դասաւանդել տարբեր դպրոցներում, եւ իր գործունէութեան համար արժանացել է պետական մակարդակի գնահատագրերի:

Նա 25 տարիներ շարունակ զբաղուել է նկարչութեամբ եւ այդ ժամանակաշրջանում յաջողել է իրականացնել անզուգական ստեղծագործութիւններ՝ ժամանակակից նկարչութեան բնագաւառում:

Տկն. Ռիմա Մինասեանը նկարչութեան արուեստը կատարելագործել է հմուտ վարպետների հսկողութեան ներքոյ, որոնցից են՝ Հանիբալ Ալխասը, Այդին Աղդաշլուն, Ջաւադ Ջաւադիփուրը եւ այլն:

Ռիմա Մինասեանը հաւաքական եւ անհատական ցուցահանդէսներ է կազմակերպել «Քրիստոնեայ արուեստագէտների նկարչութեան», եւ «Փորձագէտ նկարիչներ»ի ցուցահանդէսներում, «Քլարա Աբգար»ի արուեստի տան շրջափակում, նաեւ «Սաադաբադ», «Շաֆաղ», «Շէյս» եւ «Մահէ Մեհր» նկարչական ցուցահանդէսներում:

Տկն. Ռիման 25 կտոր իր պաստառներից է ցուցադրութեան դրել, իսկ ամենահետաքրքրականն այն է, որ նոյն դահլիճում, իր 5 ջրաներկ պաստառներով ներկայութիւն ունի նաեւ իր երիտասարդ դուստր՝ Ռուբինա Մինասեանը:

Ռուբինան, որ նկարչութիւնն սկսել է 7 տարեկանից իր մօր արուեստանոցում, 12 տարեկանում արդէն Հանիբալ Ալխասի եւ Այդին Աղդաշլուի հսկողութեան ներքոյ սկսել է կատարելագործել իր ընտրած ճիւղի մէջ:

Ռուբինայի սիրած պաստառը՝ «Հարսնամաս ջրաշուշան»ն է, որին ինքը անուանում է «Թափանցիկութիւն:

Իսկ տկն. Ռիման ամենաշատը սիրում է իր «Երազ» կոչւող իւղաներկ աքրիլիք պաստառը: Այսպիսով մայր ու դուստր իրենց գերազանց պաստառներով երազի թափանցիկութիւնն են հրամցնում դիտողներին:

Իսկ ամենագեղեցիկը նրանց հայ ու մուսուլման երկրպագուների գնահատական ու ողջոյնի այցելութիւններն էին, որոնք իւրաքանչիւրը իրենց զգացումներն էին փոխանցում թարմ ծաղկեկողովներով:

Աւելացնենք, որ այս ցուցահանդէսի մուտքը ազատ էր հայ եւ ոչ հայ հայրենակիցների համար:

ՎԱՐԴԱՆ ԴԱՎԹԵԱՆ
Թեհրան

# «Հայկական ծանրամարտի նորին գերազանցություն մարզիչը»

## *Մարտին Հուրիխանյանի գրքի շնորհանդեսը*

Լույս է տեսել լրագրող, հրապարակախոս **Մարտին Հուրիխանյանի «Հայկական ծանրամարտի նորին գերազանցություն մարզիչը»** գիրքը, որը նվիրված է կյանքից անժամանակ հեռացած, ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ (2006-2010), մարզաձեւի նվիրյալ ու հմուտ մասնագետ Աշոտ Մխիթարյանի հիշատակին: 300 տպաքանակով «Լուսաբաց» հրատարակչատան տպարանում, «Սյունէներգաշին» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սարգիս Աթոյանի հովանավորությամբ հրատարակված այս գիրքը մարդկային հոգու խորք նուրբ ներթափանցմամբ ու բազմաթիվ բացահայտումներով հետաքրքրական ճանապարհորդություն է ծանրամարտի կախարդական աշխարհ, յուրօրինակ անդրադարձ հայկական ծանրամարտի վերջին տարիների վերելքը պայմանավորած ՀՀ վաստակավոր մարզիչ Աշոտ Մխիթարյանի կյանքին ու գործունեությանը:




Գիրքը կաշառում է իր անկեղծությամբ, անհատի կերպարի միջոցով ներկայացնում է դեպքերով, իրադարձություններով հարուստ բավականին մեծ ժամանակաշրջան: Մարզիկ-մարզիչ բարդ, հաճախ անտեսանելի փոխհարաբերությունների վերհանմամբ Մարտին Հուրիխանյանին հաջողվել է ոչ միայն հնարավորինս համակողմանիորեն ներկայացնել Աշոտ Մխիթարյան անհատին, այլեւ ծանոթացնել նրա մասնագիտության յուրահատկություններին:

Երեկ նորաբաց «Գրանդադա» ռեստորանում մեծ շուքով ու հանդիսությամբ տեղի ունեցավ Մարտին Հուրիխանյանի գրքի շնորհանդեսը: Ռեստորանի հյուրընկալ սրահում էին հավաքվել ծանրամարտի Հայաստանի հավաքականի անդամներ Սմբատ Մարգարյանը, Աղվան Մելիքյանը, Տիգրան Գ. Մարտիրոսյանը, Գեւորգ Պողոսյանը, Տիգրան Վ. Մարտիրոսյանը, Գեւորգ Դավթյանը, Արա Խաչատրյանը, Վանիկ Ավետիսյանը, Ռուբեն Ալեքսանյանը, մարզաձեւի ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանը, հավաքականի գլխավոր մարզիչ Պողոս Պողոսյանը: Գրքի հրատարակման առիթով ծանրորդներին շնորհավորելու էին եկել շախմատի օլիմպիական չեմպիոններ Լեւոն Արոնյանն ու Գաբրիել Սարգսյանը, տարբեր մարզաձեւերի ներկայացուցիչներ, լրագրողներ:

Խոսելով հրատարակված գրքի մասին, Երեւանի ֆիզկուլտուրայի ինստիտուտի պրոռեկտոր, պրոֆեսոր **Միքայել Իսպիրյանը** նշեց, որ սա մարզչի մասին թերեւս առաջին գիրքն է Հայաստանում: Ուստի ինքը սիրով համաձայնվեց գրել գրքի առաջաբանը: Միքայել Իսպիրյանը հույս հայտնեց, որ մեր նշանավոր մյուս մարզիչներն էլ կարժանանան իրենց մասին գիրք գրելու պատվին, ընդ որում՝ կենդանության օրոք:

Գյումրիից ծանրամարտի մարզիչ **Ալեքսան Կարապետյանն** էլ շնորհակալություն հայտնեց Մարտին Հուրիխանյանին նման արժեքավոր գրքի հրատարակման համար, որը հավերժացնում է մեծանուն մարզիչ Աշոտ Մխիթարյանի հիշատակը: Նա հավաստիացրեց, որ կձգտեն շարունակել Աշոտ Մխիթարյանի գործը, մեր ծանրորդներին նախապատրաստել առաջիկա միջազգային մրցաշարերին:

Մարտին Հուրիխանյանը շնորհակալություն հայտնելով բոլորին՝ հրավերն ընդունելու ու գրքի շնորհանդեսին մասնակցելու համար, հետեւյալը նշեց. «Վերջին շրջանում մեր ծանրամարտը կրկին վերելք է ապրում: Այն սկսվեց 2006-ին, երբ մարզաձեւի ֆեդերացիան գլխավորեց Սամվել Խաչատրյանը, իսկ հավաքականի գլխավոր մարզիչ նշանակվեց Աշոտ Մխիթարյանը: Փառք ու պատիվ մեր ծանրորդներին, որ պատվով են ներկայացնում Հայաստանը միջազգային ամենաբարձր կարգի մրցաշարերում: Հպարտության զգացում ենք ապրում նրանց ծանրակշիռ հաղթանակներով: Իսկ այս գիրքը հարգանքի տուրք է մեր բազմավաստակ մարզչի՝ Աշոտ Մխիթարյանի հիշատակին»:

Բավականին ուրախ, անկաշկանդ մթնոլորտում անցած գրքի շնորհանդեսն ուղեկցվեց բազում անակնկալներով, տարբեր մրցույթների կազմակերպմամբ ու հյուրասիրությամբ:

# Վանես Մարտիրոսյանը մարտահրավեր է նետում Սաուլ Ալվարեսին

Առաջին միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, մեքսիկացի Սաուլ Ալվարեսը հաջողությամբ պաշտպանեց իր տիտղոսը բրիտանացի Ռայան Ռոուդսոյի հետ մենամարտում: Նա զգալի առավելություն ուներ ողջ մենամարտի ընթացքում: Արդեն 4-րդ ռաունդում Ալվարեսը մրցակցին նոկդաունի ենթարկեց, իսկ 12-րդ ռաունդում հաղթանակ տոնեց տեխնիկական նոկաուտով:




Այդ մենամարտը 38-րդն էր պրոֆեսիոնալ ռինգում Ալվարեսի համար: Նա 37-րդ հաղթանակը տոնեց, մեկ մենամարտ էլ ավարտել է ոչ-ոքի:

Այդ մենամարտին հետեւում էր պրոֆեսիոնալ ռինգում եւս պարտություն չկրած Վանես Մարտիրոսյանը, որը վերջերս նվաճել էր առաջին միջինքաշային կարգում WBC-ի արծաթե գոտին՝ տոնելով 30-րդ հաղթանակը: Վանեսը մենամարտից հետո հայտարարել էր, որ ցանկանում է աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկել Սաուլ Ալվարեսի հետ:

«Սաուլը ռինգում իրեն հիանալի դրսեւորեց: Լսել եմ, որ նա իր հաջորդ մենամարտը մտադիր է անցկացնել սեպտեմբերին: Առաջարկում եմ կազմակերպել իմ եւ Սաուլի մենամարտը: Նա մեքսիկացի շատ երկրպագուներ ունի, ես էլ բացի հայերից, մեքսիկացի ֆանատներ ունեմ: Ինձ համար պատիվ կլինի այդ օրը մրցել Ալվարեսի հետ: Կարծում եմ, որ նա կհամաձայնվի մենամարտել ինձ հետ, քանի որ դեռեւս ոչ մեկից չի խուսափել», հայտարարել է Վանես Մարտիրոսյանը:

# Մրցաշարում երկիշխանություն հաստատվեց

Ջերմուկում ընթացող շախմատի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 6-րդ տուրից հետո աղյուսակում երկիշխանություն հաստատվեց: 5-ական միավորով առաջատարի դերը ստանձնեցին Կոնստանտին Շանավան եւ Տիգրան Քոթանջյանը: Շանավան, որ նախորդ տուրից հետո միանձնյա գլխավորում էր աղյուսակը, ոչ-ոքի խաղաց Հրայր Սիմոնյանի հետ: Իսկ ահա Տիգրան Քոթանջյանը պարտության մատնեց Աշոտ Նադանյանին եւ միավորներով հավասարվեց Շանավային:

4,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Միխայիլ Ուլիբինը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Հրայր Սիմոնյանը, Դանիլ Դուբովն ու Մաքսիմ Տուրովը: Ուլիբինը հաշտություն կնքեց Սամվել Տեր-Սահակյանի հետ, Տուրովը հաղթեց Արա Մինասյանին, Ռոբերտ Հովհաննիսյանն էլ առավելության հասավ Ռոբերտ Աղասարյանի նկատմամբ: Տուրը հաղթական էր նաեւ Դանիլ Դուբովի համար, որը հաղթեց Արամ Պլուզյանին:

Այսօր կայանալիք 7-րդ տուրում կենտրոնականը երկու առաջատարների՝ Կոնստանտին Շանավայի եւ Տիգրան Քոթանջյանի մրցավեճն է: Կարեւոր նշանակություն կունենան նաեւ Ուլիբին-Տուրով, Դուբով-Ռոբերտ Հովհաննիսյան, Հրայր Սիմոնյան-Էլշան Մորադիաբադի պարտիաները:

# «Կուբանը» Մուտուին 2 մլն եվրո է առաջարկել

Կրասնոդարի «Կուբանը» բանակցում է իտալական «Ֆիորենտինայում» հանդես եկող 32-ամյա ռումինացի հարձակվող Ադրիան Մուտուի հետ: Ակումբը նրան առաջարկել է տարեկան 2 մլն եվրո աշխատավարձ եւ ցանկացած պահի ֆուտբոլիստն ինքնաթիռով անվճար կարող է մեկնել տուն: Սակայն Մուտուի գործակալ Ջովանի Բեկալին նշել է, որ Մուտուն ցանկանում է մնալ Ֆլորենցիայում, որտեղ սովորում են նրա երեխաները: Հաջորդ մրցաշրջանում նրա տարեկան աշխատավարձը կազմելու է 2,8 մլն եվրո: Եվ եթե հետագայում իտալական ակումբը Մուտուին թեկուզ այդ աշխատավարձի կիսով չափ վճարի, ռումինացի ֆուտբոլիստը կմնա Իտալիայում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Հայաստանի երեք բռնցքամարտիկներ հավակնում են մեդալների

Անկարայում շարունակվող բռնցքամարտի Եվրոպայի առաջնության հերթական օրը ռինգ դուրս եկած 4 հայ բռնցքամարտիկներից երեքը հաջողությամբ ավարտելով մենամարտերը, մտան քառորդ եզրափակիչ:

Մինչեւ 60 կգ քաշային Վլադիմիր Սարուխանյանը վիճակահանությամբ առաջին փուլում մրցակից չուներ, ուստի պայքարը սկսեց 1/8 եզրափակիչից: Հայ բռնցքամարտիկը 22-14 հաշվով առավելության հասավ Դանիան ներկայացնող Ռաշիդ Կասեմի նկատմամբ: Քառորդ եզրափակիչում Սարուխանյանը կմրցի անգլիացի Մարտին Ուարդի հետ: Վերջինս 16-10 հաշվով պարտության էր մատնել ռուսաստանցի Իլդար Վագանովին:

Թուրքիայում իր երկրորդ մենամարտն էլ հաղթանակով ավարտեց Եվրոպայի չեմպիոն, Պեկինի օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր Հրաչյա Ջավախյանը (64 կգ): Այս անգամ նա պարտության մատնեց բելառուս Եվգենի Ռամաշկեւիչին (14-11): Քառորդ եզրափակիչում Ջավախյանի մրցակիցը կլինի անգլիացի Թոմաս Ստալկերը, որը հաղթել է ուկրաինացի Ալեքսանդր Կլյուչկոյին (19-14):

Պայքարը կշարունակի նաեւ Հայաստանի երրորդ ներկայացուցիչը՝ մինչեւ 75 կգ քաշային Արթուր Խաչատրյանը: Նա 15-9 հաշվով պարտության մատնեց մակեդոնացի Ֆաթլում Ժուսային: Քառորդ եզրափակիչում Արթուրը կմրցի վրացի Զաքա Խոսիտաշվիլու հետ: Վերջինս պայքարից դուրս էր մղել հունգարացի Զոլթան Հարկսային (19-12):

Ասպարեզում մնացած մեր 4-րդ ներկայացուցիչը՝ մինչեւ 56 կգ քաշային Հովհաննես Բաչկովն անհաջողության մատնվեց ռուսաստանցի Դմիտրի Պոլյանսկու հետ մրցավեճում (10-23) ու դուրս մնաց մեդալների համար մղվող պայքարից:

Այսպիսով, 3 հայ բռնցքամարտիկներ շարունակում են պայքարն առաջնության պարգեւների համար: Կիսաեզրափակիչ մտնելու դեպքում նրանք առնվազն կապահովեն բրոնզե մեդալը:

# Լիլիթ Մկրտչյանը գլխավորեց աղյուսակը

Հունգարիայում ընթացող Դյորդ Մարքսի շախմատի 9-րդ հուշամրցաշարում հաջող է հանդես գալիս Լիլիթ Մկրտչյանը: 4-րդ տուրում սեւերով հաղթելով Էսթեր Դուդասին, Լիլիթը վաստակեց 3 միավոր եւ միանձնյա գլխավորեց աղյուսակը: 2,5 միավոր ունի Ալինա Կաշլինսկայան, որը հաշտություն կնքեց Աննա Շարեւիչի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Իլդիկո Մադլի եւ Աննա Ռուդոլֆի մրցավեճը: Ռուդոլֆն ու Շարեւիչը վաստակել են 2-ական միավոր, Մադլն ունի 1,5 միավոր: Աղյուսակը 1 միավորով եզրափակում է Դուդասը:

# Առաջատարները բաժանվեցին խաղաղությամբ

Վորոնեժի շախմատի մրցաշարի 8-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Զավեն Անդրեասյանի եւ Գեւորգ Հարությունյանի մրցավեճը: Գրանցվեց ոչ-ոքի: Այս տուրում հայ շախմատիստներից ոչ մեկին չհաջողվեց հաղթանակ տոնել: Լիլիթ Գալոյանն էլ հաշտություն կնքեց Սուրի Վաիբհավի հետ, իսկ Նելլի Աղինյանը պարտվեց Դմիտրի Կուրուկինին:

Առաջատարների խմբում գտնվող Արթուր Գաբրիելյանը ոչ-ոքի խաղաց Սեմյոն Դվոյրիսի հետ: Հաշտություն կնքեց նաեւ Գեւորգ Հայրապետյանը, որի մրցակիցը Միրոսլավ Վլասենկոն էր: Տուրն անհաջող էր Էդուարդ Բարսամյանի համար, որը պարտվեց Ալեքսանդր Կլյուեւին:

8 տուրից հետո Գեւորգ Հարությունյանը 6 միավորով Անդրեյ Դեւյատկինի, Ալեքսանդր Ռախմանովի, Դմիտրի Կոկորեւի եւ Եվգենի Շապոշնիկովի հետ գլխավորում է աղյուսակը: Մյուս առաջատարները եւս խաղաղությամբ բաժանվեցին: Ոչ-ոքի արդյունք գրանցվեց Դեւյատկին-Ռախմանով, Շապոշնիկով-Կոկարեւ պարտիաներում: 5,5-ական միավորով առաջատարներին հետապնդող շախմատիստների թվում են Զավեն Անդրեասյանն ու Արթուր Գաբրիելյանը: 4,5-ական միավոր ունեն Լիլիթ Գալոյանն ու Գեւորգ Հայրապետյանը: Նելլի Աղինյանը վաստակել է 3,5 միավոր, Էդուարդ Բարսամյանն ունի 3 միավոր:

# Էլինա Դանիելյանը կմասնակցի Գրան պրիի 1-ին փուլին

ՖԻԴԵ-ն հրապարակել է այն 12 շախմատիստուհիների ցանկը, որոնք կմասնակցեն օգոստոսի 1-15-ը Ռոստովում կայանալիք շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 1-ին փուլին: Նրանց թվում է նաեւ գրոսմայստեր Էլինա Դանիելյանը: Հայ շախմատիստուհին Ռոստովում կմրցի աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանի, Ռուան Լուֆեյի (երկուսն էլ՝ Չինաստան), հնդիկ գրոսմայստեր Համպի Կոներուի, ռուսաստանցիներ Նադեժդա Կոսինցեւայի, Տատյանա Կոսինցեւայի, Ալեքսանդրա Կոստենյուկի, Ալիսա Գալյամովայի, Եկատերինա Կովալեւսկայայի, Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկի, ուկրաինացի Եկատերինա Լահնոյի եւ բուլղարացի Անտուանետա Ստեֆանովայի հետ:

Հիշեցնենք, որ Գրան պրիի խաղարկությունում կանցկացվի 6 փուլ:



Փուլերից մեկը հաջորդ տարի կանցկացվի Ջերմուկում:

# Միջազգային մրցաշար Բուլղարիայում

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը Բուլղարիայում կմասնակցի միջազգային մրցաշարի: Մեր պատանի ֆուտբոլիստների մրցակիցներն են Ռումինիայի, Հյուսիսային Իռլանդիայի եւ Բուլղարիայի ընտրանիները: Մրցաշարն անցկացվելու է Բուլղարիայի Պրավեց քաղաքում:

Հավաքականի գլխավոր մարզիչ Սուրեն Չախալյանի գլխավորությամբ Բուլղարիա են մեկնել 18 ֆուտբոլիստներ, որոնցից 5-ը՝ դարպասապահ Մարտին Գեւորգյանը («Կռիլյա Սովետով»), պաշտպաններ Ռոբերտ Դարբինյանն ու Սերոբ Գրիգորյանը (Կոնոպլյովի անվան ակադեմիա), Արտյոմ Սիմոնյանը եւ Նորայր Տիգրանյանը (երկուսն էլ՝ «Զենիթ») լեգեոնականներ են:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

